№ 4 (105) X ՏԱՐԻ ՄԱՅԻՍ 1900

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
"Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

LIBRARY

ԱՄԲՈԽԱՅԻՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ

V

(Վերջ)

Սակայն — ասում են ամբոխային տրամաբանութեան ամէն կարգի ներկայացուցիչները — բոլոր քաղաքական խաղերի և անյաջողութիւնների առաջը կարելի էր առնել, եթէ յեղափոխական կազմակերպութիւնները՝ փոքր „խլրտումների" փոխարէն՝ հոգային նախօրէն լաւ պատրաստել լաւ կազմակերպել ժողովուրդը։

Կարիք չկայ իհարկէ այստեղ կանգ առնելու այն խնդրի վրայ, որ „նախապատրաստութեան" և ըստ կարելոյն լայն ծաւալով „կազմակերպելու" պահանջը — պարզապէս բոլոր գործող յեղափոխականների իդէալն է եղել և կը լինի միշտ։ Կռւի դաշտը նետուելիս՝ ջանալ ըստ կարելոյն մեծ ուժ համախմբուած ունենալ — դա այնքան բնական, այնքան տարրական, նոյնիսկ այնքան banal պահանջ է, որ միայն կրէտինները կարող են տարակուսել, թէ յեղափոխականները կարող էին արհամարհել այդ պահանջը։ Բայց եթէ այդպիսի կրէտիններ կան մեր մէջ, թող դրանք ստուգեն մեր կարծիքը մեղադրւող յեղափոխականների ծրագրերում, թերթերում, պաշտօնական մարմինների կամ անհատ գործիչների կեանքում ևն։ Եւ եթէ դրանից յետոյ էլ ապացոյցները դեռ ևս պակասեն, թող դիմեն վերջապէս հայութեան այն մեծագոյն մասին, որը մի տեղ միանգամայն անտարբեր գտնւեց դէպի ընդհանուր ազգային խնդիրները, միւս տեղ քաղաքացիական համարձակութիւն չ'ունեցաւ նպաստել մեր շարժման, երրորդ տեղ հակայեղափոխական յայտնւեց, չորրորդում հարկաւոր գտաւ նոյնիսկ իր յատուկ սոֆտաները կտուրներ բարձրացնել՝ գործի կողմնակից յեղափոխականների դէմ սալավաթ կանչելու համար։ Հայութեան այդ մեծագոյն մասը անշուշտ կը հաստատէ թէ՝ իրաւ որ, եթէ գործի-յեղափոխականները „քչով" հանդէս եկան, դա, յամենայն դէպս, չէ կարող բացատրուել նրանով, որ այդ յեղափոխականները „շատը" չէին ուզում կամ „շատը" ունենալու համար ոևէ ջանքեր էին խնայում։ Այդ հեղինակաւոր ցուցմունքով էլ հարցը ինքնըստինքեան կը փակւի՝ միանգամից ընդմիշտ պարզելով, որ այն, ինչ բացարձակ տեսակէտից մեզ թւում է քիչ, համեմատական տեսակէտից՝ եղել է ուժերի այն maximum-ը (ամէնաշատը), որ՝ որոշ ժամանակում և որոշ տեղի հանգամանքներում՝ կարելի էր համախմբել յեղափոխական գործի շուրջը։

Մենք երկար կանգ չենք առնի նաև ապացուցանելու, որ յեղափոխական ձեռնարկները ոչ միայն չէին հակասում նախապատրաստութեան պահանջին, այլև անխուսափելի միջոցներ էին այդ պահանջին բաւարարութիւն տալու համար։ Մենք միայն կ'ամփոփենք այստեղ զանազան առիթներով այդ մասին „Դրօշակում" յայտնած մեր կարծիքները։

„Եթէ մարդկային անցեալի նախակարապետները իրենց գաղափարները առաջ քշելու համար սպասէին, որ նախօրէն ամէն ոք իրենց հետ համաձայնի, մեր քաղաքակրթութիւնը դեռ քարի դարումը կը լինէր", ասել է մի հրապարակախօս՝ մեզ թողնելով մտաբերել այն բոլոր խաչերը, խարոյկները, կախաղանները, գիլեօտինները, բանտերը — մի խօսքով՝ արեան և անհամար տանջանքների այն հսկայական հնոցները, որոնց միջով անցել են յեղափոխիչ գաղափարները։ Ինչպէս երեխային՝ սիրող մայր, այնպէս էլ յեղափոխող գաղափարների աճման համար միշտ անհրաժեշտ են եղել մութ բանտերի խոնաւ օրօրոցները, երկաթեայ շղթաների բազմալեզու նանիները և կարմիր դահիճների մահաբեր գուրգուրանքները։ Ուրիշ ելք չկայ նոր գաղափարների յաղթանակի համար, այլ խօսքով՝ ուրիշ միջոց չկայ յեղափոխական գործը նախապատրաստելու համար։ Այո՛, չկայ աշխարհումս ոչ մի աւելի կրթիչ օրինակ, քան գործերի կենդանի օրինակն է. չկայ աշխարհումս ոչ մի լսարան, ուր կարելի լինէր հաւաքել այնքան լսողներ, որքան ունենում է գործի ասպարէզը նետուած յեղափոխական քարոզիչը. չկայ ոչ մի ձայն աշխարհումս աւելի հեռու, աւելի լայն տարածութեան վրայ լսւող, քան գործերի գոռում-գոչիւնն է. չկայ ոչ մի լեզու, որով կարելի լինէր խօսել ամբողջ մարդկութեան առաջ հասկանալի խօսքերով, բացի գործերի լեզուից։

Եւ իրաւ։ Ո՞վ աւելի մեծ համարձակութիւն, աւելի մեծ բարոյական իրաւունք կ'ունենար անձնուիրութեան հրաւիրել ժողովրդի բոլոր կենսունակ տարրերին, քան ինքը՝ առաջինը արեան դաշտը նետւող յեղափոխա-

կանը։ Ո՞վ, ի՞նչ մարդ, ի՞նչ քարոզիչ կամ քարոզիչներ կարող էին Գոլգոթայից մինչև վան, Ռուսաստանից մինչև Ամերիկա ցնցել հայութիւնը՝ բոլորի սրտերին միևնոյն զարկը հաղորդելով, բոլորի առաջ պարզ ամփոփելով մեր ընդհանուր ազգային իղձերը, քան այդ անում էին յեղափոխական ձեռնարկները։ Ո՞ր գրողը, ո՞ր ելեզուագէտը, ո՞ր հարուստը, ո՞ր հռետորը կարող էր հայկական պահանջների մասին այնքան հրատարակութիւնների մէջ, այնքան լեզուներով, այնքան գրել, այնքան տպագրել, այնքան սրտեր և մտքեր շարժել, որքան գրել, հեռագրել, տպագրել, զգացուել, մտածել էր տալիս հայ ժողովրդի ծանր, անօրմալ, դժոխային կացութեան արտայայտութիւնը—յեղափոխական բողոքը։ Ո՞ւր են վերջապէս—հրոսակային կամ տէոորիստական, զինատար կամ պարտիզանական խմբերի կռիւներից դուրս — այն դահլիճները, այն զօրանոցները, ուր հայը պէտք է վարժուէր արեան գործի մէջ և յեղափոխական բանակներ „պատրաստէր“ կամ „կազմակերպէր“։

—

Դժուար չէ, իհարկէ, գերադրական ածականների մի ամբողջ բեռը շալակած, նկարագրել միամիտների առաջ „լուռ ու մունջ նախապատրաստութիւնների“ ֆանտաստիքական հեռանկարը՝ անպայման յաղթանակով պսակուած, և յետոյ զէնք դարձնել այդ զառանցանքները նոյն նախապատրաստութեան գործին ամբողջ հոգւով նուիրուածների դէմ։ Բայց le superlatif est le cachet des sots (գերադրական ձևը յիմարների կնիքն է) — վաղուց ասել է Մետերնիխը, և մեզ իհարկէ թոյլ կը տրուի, եթէ Մետերնիխից աւելի հեռու չգնալ, առնւազը գոնէ համաձայնուել Մետերնիխի հետ։ Հասկանանք վերջապէս, որ անմտութիւն է մարդկանցից պահանջել մի բան, որ նաև անկարելի է իրագործել։ Ի՞նչպէս պատրաստուել „տարիների ընթացքում“ լռութեան մէջ։ Պէ՞տք է երկիր մտնեն մարդիկ. պէ՞տք է դրանք տեսնուեն, խօսեն, համոզեն, բանակցեն կարևոր անձանց և տեղերի հետ. պէ՞տք է գրագրութիւն ունենան. պէ՞տք է զէնք տարածեն, ստանան, գնեն, պահպանեն, տեղափոխեն. պէ՞տք է զէնքի և նրա գործածութեանը ծանօթացնեն մարդկանց թէ՞ ոչ։ Փորձեցէք միայն փուչ խօսքերից կենդանաբար գործի անցնել. փորձեցէք միայն շատ կարճ ժամանակ — այո, թէկուզ ամենակարճ ժամանակ — „նախապատրաստութեամբ“ զբաղուել և դուք կը տեսնէք, որ լռութիւնը ձեր գործում շուտով կը խանգարուի։ Թշնամին ոչ ձեզնից թոյլ է, ոչ էլ աւելի վատ կազմակերպուած։ Ուր որ գնաք, նրա քանցերը, նրա սահմանափակումները, նրա պաշտօնական և ոչ-պաշտօնական գործակալները կանգնելու են ձեր առաջ դէմ առ դէմ, և այսօր չէ էգուց՝ դուք կը բռնուէք գործի վրայ։ Ահա ինչու „լռութիւն“ քարոզողները նրանք են մեծ մասամբ, որոնք ոչ մի առնչութիւն չունեն գործնական յեղափոխութեան հետ։ Ահա ինչու հսկայական „նախապատրաստութեան“ քարոզների հետ նրանք մատնուած են „քաղաքակրթական“ զարգացման մաշուած երգերը կրկնելու, տեղը եկած ժամանակ առաջ տանելու նաև „համբերութեան“, „հաւատարմութեան“ կամ „տեսական յեղափոխականութեան“ քարոզները։ Մի թշնամի, որ ունի դարևոր կազմակերպութիւն, որը իր ամբողջ քայքայման հետ դեռ ընդունակ է կանոնաւոր պատերազմներ մղել և երբեմն յաղթել իր հակառակորդներին, հեշտ գործ չէ այնքան երկար ժամանակ խաբած պահել որչափ կը պահանջուի նրա ուժը հակակշռող ուժ երկրում կազմակերպելու համար։ Այդ ձգտումներում դուք յաջողութիւն չէք ունենալ և հետևաբար՝ թշնամուն սիստեմատիքաբար խաբել ձգտելով՝ դուք սիստեմատիքաբար խաբած կը լինէք միայն ձեր բարեկամներին, ձեր ընկերներին, որոնք միամտաբար հաւատալով ձեզ՝ թէ դուք կարող էք և պէտք է խաբէք թշնամուն, մի գեղեցիկ օր կը տեսնեն, որ մի այն իրենք են ձեզնով խաբուել — աւել ոչինչ։

Այդպիսի փոխադարձ յարաբերութիւններ „սալավաթ“ պոռող սոֆիտաների և իրենց բարեկամների մէջ՝ իհարկէ իրար միանգամայն վայել յարաբերութիւններ են, և մենք դրա դէմ ոչինչ չունենք ասելու. բայց այդ „սալավաթների“ իսկական արժէքը վերջապէս հասկանալու համար, մենք մի բոպէ մի կողմ կը թողնենք մեր հայեացքները գործի վրայ և կանգ կառնենք մեր „քննադատների“ տեսակէտի վրայ։ Հակառակ տրամաբանական և սոցիոլոգիական բոլոր օրէնքների, համաձայնուենք մի բոպէ, որ կարելի էր լռութեան մէջ պատրաստուել և այնպէս հրապարակ դուրս գալ։ Ենթադրենք, որ—թէկուզ դիւթական գաւազանի մի հարուածով — յեղափոխականները գործի դիմէին՝ բաւական լայն չափերով կազմակերպուած ժողովրդի հետ։ Միթէ՞ մենք կարող կը լինէինք հաստատապէս ասել, որ այդ դէպքում մենք արդէն ապահովուած կը լինէինք մեր ազատութեան գործը։ Ո՞ւր է ուժերի այն minimum-ը (ամենաքիչ չափը), որ պահանջուում է գործ սկսելու համար։ Վերջին յոյնտաճկական պատերազմի ժամանակ Յունաստանը, իբր անկախ երկիր, իր միներներով, մեծ պետութիւնների հետ յարաբերութիւն ունեցող իր բոլոր դիպլոմատներով, իր զինուորական խորհուրդներով, սեփական հողի վրայ, իր ազատ զօրանոցներում ժողովուած, կրթուած և կազմակերպուած 60-70 հազար զօրք դուրս բերեց Տաճկաստանի դէմ և կրկին յաղթուեց։ Չէ՞ կարող մի այդպիսի դժբախտութիւն մեզ հետ էլ պատահել՝ թէկուզ կուի դաշտ դուրս եկած լինէինք „մեծ պատրաստութիւններով“։ Մեզ կարող են իրաւամբ նկատել, իհարկէ, որ գաղափարով ոգևորուած մի յեղափոխականը արժէ ամենապակասը՝ տասը այնպիսի պաշտօնական կուռողների, ինչպիսին է զինուորը, այն էլ յունական զինուորը, և ուրեմն օրինակը համոզեցուցիչ չէ։ Դիմենք ուրիշ օրի-

նակների։ Բուլղարները ապստամբել են 1828, 1837, 1841, 1862, 1867, 1868, 1872 և 1876 թւին. ազատուել են 1878-ին. ուրեմն շարժումը տևել է 50 տարի, ունենալով ամենաքիչը 44 տարուայ ընթացքում անընդհատ անյաջողութիւն։ Յոյները ապստամբել են 1770, 1798-1801, 1812, 1820-1829 թւերին. ազատութիւն գտան 1829-1830 թւին, այսինքն 60 տարուց յետոյ, շատ անգամ տեղիք տալով զարհուրելի կոտորածների և ամբողջ Պելոպոնէսի ու Մօրէայի կատարեալ աւերման։ Միթէ՞ բուլղարները և մանաւանդ յոյները միշտ „անպատրաստ" են կուի դուրս եկել, որ տասնեակ տարիների ընթացքում միմիայն սոսկալի անյաջողութիւններ են ունեցել։ Այսօր ազատ Կրէտէն, որ իր կռիւը սկսեց դեռ Յունաստանի հետ միասին, ապստամբել է տասը անգամից աւել, պաշտպանելով իր դատը ամբողջ 128 տարի։ Սերբերը կռուել են 40 տարու չափ և նախ քան ազատուելը՝ պարտութիւններ են կրել շատ անգամ. Ռումանական շարժումը, նոյնպէս արիւնով ներկւած, տևել է ոչ պակաս 100 տարուց։ Բօսնիա և Հերցոգովինա կռուել են 1830 թւից մինչ 1870 թիւը։ Իրլանդիան 600 տարի է չէ ընկճւում իր ազատութեան տենչանքներում՝ չնայած իր միլիօնաւոր զոհերին։ Դեռ երէկ կռւող հերոսական Կուբան միայն մեր դարում երեք խոշոր ապստամբութիւններ է ունեցել՝ վերջին ապստամբութեան ժամանակ միայն 200,000 զոհ տալով. իտալական յեղափոխութիւնը 60 տարի պահանջեց յաղթանակը տանելու համար։ Հարցնում ենք. միթէ՞ սրանք բոլորն էլ ամէն անգամ „անպատրաստ" են պատմական բեմ դուրս եկել, որ չեն կարողացել մի անգամից իրենց ազատութիւնը ապահովել..

—

Ընթերցողը տեսնում է ուրեմն, որ „լուրջ" նախապատրաստութեան պահանջները — որքան էլ ճշտակի ձևերով կրկնեն հայ դպիրներ և դպրիկները — իսկապէս զուրկ են լրջութեան ոևէ յատկութիւններից և ուրիշ կերպ չէ կարելի հասկանալ այդ պահանջները, բայց եթէ այն մտքով միայն, որ յեղափոխական կռիւը այնպէս պէտք է տանւէր, որ արդէն անպայման յաղթանակ բերած լինէր։ Բայց եթէ պատմական երևոյթները պէտք է դատւեն ոչ թէ իրենց ժամանակի և տեղի հետ սերտ կապւած պայմաններում, այլ ցանկութիւնների տեսակէտից, ո՞րտեղ կարող են վերջանալ այս տեսակ գանգատների սահմանները։ Երևակայեցէք մի րոպէ, որ մենք այնքան բախտաւոր լինէինք, որ մինչ այժմ միմիայն յեղափոխական շարքերից լինէինք զոհ տւած, բայց և այնպէս՝ տակաւին դեռ ևս „ապարդիւն"։ Չէ՞ր կարելի այդ դէպքումն էլ ցանկութիւնների հարուստ աշխարհից պոկել բաղձանքների մի նոր փունջ և կրկին դատափետել յեղափոխականներին, որ դրանք — շնորհիւ իրենց „անպատրաստութեան", „սառն դատողութեան" բացակայութեան, „քաղաքական անհմտութեան" ևս — միայն ծծում են սերնդի ամենալաւ ուժերը ու փտնում ահագին միջոցներ առանց ոևէ „արդիւնքի"։ Ենթադրենք այնուհետ, որ յեղափոխականներին յաջողած լինէր այսօր որոշ զոհերով այս կամ այն բարեփոխումները ձեռք բերել Հայաստանում։ Միթէ՞ դժւար կը լինէր այստեղ էլ մեղադրել նրանց, որ — շնորհիւ իրենց „անպատրաստութեան" ևայլն — չկարողացան գործը այնպէս տանել, որ զոհեր քիչ լինէին տւած կամ միևնոյն զոհերով աւելի մեծ փոփոխութիւններ լինէին ձեռք բերած։ Չէ՞ր կարելի միթէ մի փոքր էլ դէնը գնալ և — յանուն նոյն „անպատրաստութեան", „սառն դատողութեան" բացակայութեան, „քաղաքական անհմտութեան" ևս, — պահանջել նոյնիսկ, որ ամենևին զոհ չլինէին տւած, այլ այնպէս՝ միմիայն քաղաքական յաջող խաղերի և մեծամեծ կապերի միջոցով՝ ուղղակի առաջ քշէին եւրօպական միջամտութեան գործը և ապահովէին հայկական հարցի յաջող լուծումը։ Եւ այդպէս շարունակելով՝ չէ՞ր կարելի միթէ հասնել վերջապէս Գամառ-Քաթիպայի „Հայի բաղձանքին". —

„Ա՜խ, ինչպէ՜ս կուզէի տեսնել մեր հայրենի
Ազատ, ապահով, կրթեալ, ինքնագոհ,
Ամէն հայի տուն — դրախտ երկնային...
Լոկ այդ բանն ինձնից չուզենար մէկ զոհ...!

„Ա՜խ, ինչպէ՜ս կուզէի տեսնել Հայաստան
Մի օր ազատւած թշնամու ձեռքէն,
Հայի երկիրը — հայի սեփական...
Լոկ այդ չի յանձնէր ինձ իմ կողքէկէն..."

Բայց — բարեբախտաբար թէ դժբախտաբար, չգիտենք — բաղձանքները չեն, որ ընթացք են տալիս կեանքին։ Ռուսերէն մի առած ասում է, որ „դժոխքի ճանապարհն էլ բարի ցանկութիւններով է սփռւած", բայց և այնպէս մենք գիտենք, որ այդ ճանապարհը առհասարակ հրապուրիչ չէ մարդկանց համար։ Սակայն, ընթերցող, ոչ զարմանանք և ոչ էլ ղայրանանք։ Ամբոխային տրամաբանութեան մատնւած բոլոր գլուխների ընդհանուր ճակատագիրն է այդ — մի ճակատագիր, որ միշտ իր անգթութեան գագաթնակէտին է հասնում մանաւանդ մեծ անյաջողութիւնների դէպքերում։ Դա մարդկային ամբողջ պատմութեան մէջ դիտւած մի ընդհանուր երևոյթ է, որ ճշտում են բոլոր ուղղութիւնների սօցիօլօգները։

„Ամէնազարգացած հասարակութիւնների մէջ — ասում է օրինակ Վորմսը իր Organisme et Société աշխատասիրութեան մէջ — հասարակական դժբախտութիւնների ժամանակ, մինչև անգամ միմիայն երևակայական դժբախտութիւններից ծնւած երկիւղի ազդեցութեան տակ, երբեմն վերածընւում են հին ժամանակների ամենասարսափելի, յաճախ ամենաբարբարոս սովորութիւնները"։

Ուրիշ խօսքերով և մեր նիւթին յարմարեցնելով՝ դա նշանակում է, որ ընդհանուր ազգային դժբախտութեան ժամանակ՝ մարդկային կորուստների, մարդկային կոտորածների հետ անմիջապէս կապւում են նաև մտքերի

անվնաս կոտորածներ։ Ահա ինչու հասկանալի է, որ յաջողութեան օրերում դժգոհ „խոհեմների“ թիւը ոչ այնքան մեծ կը լինէր և ոչ էլ այդ „խելօքները“ կարող կը լինէին այնքան ունկնդիրներ գտնել, որքան այժմ։ Յաջողութեան օրերում ընդհանուր յոյսերի պայծառ ալիքները իրենց բուռն հոսանքի մէջ կ՚առնէին այսօրուայ նոյնիսկ հոգեպէս սնանկ դժգոհներին, և դրանք այն ժամանակ ոչ մի առիթ չէին բաց թողնի՝ նոյն կտուրների վրայից, որտեղից այսօր արշաւանքներ են քարոզում գործի–յեղափոխականների դէմ, պոռալ արաբ–աշխարհին, որ նրանք միշտ էլ հաւանել և օգնել են ամէն կարգի յեղափոխական ձեռնարկներին, որ միշտ էլ համոզուած յեղափոխականների շարքումն են եղել որ նոյնիսկ առանց իրենց մասնակցութեան ոչ մի աջողութիւն ձեռք բերուած չէր լինի ևն ևն։ Բայց ներկայ սև օրերում դրանք—„խելօքներին“ յատուկ տրամաբանութեամբ, նաև „հոտառութեամբ“—յարմարւում են միջավայրին և ստւարացնում „քննադատների“ շարքերը՝ մինչև էգուց–միւս օր, երբ պատմական անիւը ուրէ ձևով կը թեքւի յօգուտ հայութեան, կրկին յանուն հոսանքով կը շտապեն ամենակատաղի յեղափոխականների աթոռները գրաւելու, մոռանալով, նոյնիսկ հերքելով, որ հէնց այն բոպէին՝ երբ պատմական անիւը թեքւում էր, նրանք դեռ ևս քրտինք էին թափում ամբոխի առաջ իրենց „քննադատութիւններին“ աւելի համոզիչ ձև տալու համար...

—

Ամփոփենք մեր կարծիքները։

Ասել՝ թէ յեղափոխականները նախ քան գործնական քայլերի դիմելը պէտք է նախօրէն լաւ „կազմակերպւէին“ ևն — դա միևնոյն է թէ ասել, որ գործը պէտք է լաւ տանուէր։ Պարզ է, որ այդպիսի „խորհուրդներ“ ոչ ոքի համար ոչ մի նշանակութիւն չեն կարող ունենալ։ Գործը, յեղափոխական գործը, լաւ տանելը — մեր իդեալն է արդէն. բայց ի՞նչպէս այդ գործը պէտք է տանուէր կամ տանուի, որ լաւ լինի, որ լաւ կազմակերպւենք ևն—ահա ամբողջ հարցը, որի դիմաց երբար խառնւում, իրար հակասում, իրար ոչընչացնում են մեր „խոհեմների“ խորհուրդները, մեր „սոցիալ–դեմոկրատների“ սալալաթները, մեր „քննադատող“ դատարկ կարասների՝ ներդաշնակութիւնից զուրկ, անմիտ և միապաղաղ ձայները։

„Պատրաստութեան“ կամ „վաղաժամութեան“ անմիտ ողբերի մէջ չէ կայանում մեր շարժման յաջողութիւնը (որովհետև իսկապէս երբ յեղափոխական նախաձեռնութեան մէջ մի բան կատարւում է կամ կարելի է կատարել դա ինքնըստինեան արդէն նշանակում է, որ „ժամը“ հասել է), այլ կռուի յարատեւութեան մէջ։ Մեր դատը վաղուց է հայերիս համար սոսկալի մի վերքի նշանակութիւն ստացել։ Շնորհիւ տաճիկ կառավարութեան կատարեալ կուրութեան՝ նոյն վերքի նշանակութիւնն է ստացել նա Թիւրքիայի համար ևս։ Թէ մենք և թէ Թիւրքիան ընտրել ենք այդ վերքի դէմ վիրաբուժական միջոց. մենք դիմել ենք յեղափոխութեան, Թիւրքիան՝ մեզ կոտորելու միջոցին։ Մեզ մնում է ուրեմն երկուսից մէկը—կամ սեփական ձեռքերով թաղել մեր դատը, կամ շարունակել մեր կռիւը այնքան, որ դա՝ թիւրքերի դէմ մինչև այժմ ուղղած դժգոհութիւնների, պաշտօնական բողոքների և թղթէ սպառնալիքների շրջանը անցնելով, վերջապէս մի վերք դառնայ նաև այն ազգութիւնների ու պետութիւնների համար, որոնք կապ ունեն Թիւրքիայի և մեր հարցի հետ։ Այն օրը, երբ դրանք ևս համոզւեցին, որ այդ վերքի դէմ պէտք է դիմել վիրաբուժութեան, մեր դատը ապահովւած կը լինի. այդ օրը կը լինի և մեր յաջողութեան օրը։

Զմոռանանք, որ մեր մտիկ անցեալը—որքան և ծանր լիներ դա մեզ՝ ժամանակակիցներիս համար — պատմութեան մէջ շատ աննշան շրջան պէտք է համարւի, որպէսզի կարելի լիներ նրանից ոևէ համարձակ եզրակացութիւնների յանգել։ Մի թոյլ, անզէն, ցիրուցան, բաւականաչափ անհատական և ռազմական բնազդներով աղքատ ժողովրդի ազատագրական շարժումը այնպիսի մի հասարակական երևոյթ չէ, որ իր առաջին բողբոջները ձգելուն պէս՝ հասունութեան հասնէր։ Այդպիսի յաջողութիւն, ինչպէս տեսանք վերը, չէն ունեցել նոյնիսկ մեզնից աւելի լաւ պայմաններում գտնւող ազգերը,—ո՞ւր մնաց նոյնը պահանջել ոևէ տասը տարուայ հասակը ունեցող մանուկ հայ յեղափոխութիւնից։

Այո, անցեալի կորուստները ճնշում, ճմլում են մեր սրտեր ու մտքերը, բայց. էնմանենք Թուկիդիտէսի այն հերոսին, որ կռւի միջոցին փոխանակ իր հակառակորդի հարւածներին դիմադրելու և աշխատելու նրա մարմնի ամենազգայուն տեղերին հարւածներ հասցնելու, ձեռքերը սեղմում էր մարմնի այն տեղերին, ուր ընկնում էին հակառակորդի հարւածները։ Կասկած չկայ, որ այդպիսի մի ընթացք մեզ կը տանէր միմիայն դէպի անպտղման կորուստ, այն ինչ յարատև կռիւը դեռ շատ բան կարող է խոստանալ մեզ։ Եւ ո՞վ գիտէ՝ թէ ինչ գոյնով պիտի լուսաբանւեն այսօրուայ մեր կորուստները 50–100 տարուց յետոյ, երբ դրանք կապւած կը լինեն հետևողականութեամբ՝ յետագայ գալիք երևոյթների հետ մեր կեանքում։ Ո՞վ գիտէ, գուցէ ապագան՝ այսօր ողբացւող դէպքերը արձանագրէ և տանէ իբր մեր ազատագրութեան տարեշրջաններ։ Ո՞ր՝ մի ժամանակ ըստրուկ և այսօր ազատ ազգը չէ մոռացել իր կրած զարհուրելի կորուստները։ Ո՞րը դրանցից այսօր կը փոխէր իր ազատութիւնը նախկին վիճակին և անցեալ կեանքի այնպիսի մի ընթացքի հետ, ուր ոչ մի տեսակի զոհ և աւերումներ տեղի չէլինէին ունեցած։ „Հայ մարդկութեան համար աւելի գեղեցիկ յոյս, քան մի ճնշւած ազգի յարութիւն առնելը“, ստիպւած է եղել խոստովա-

նել Նոյնիսկ այնպիսի մի հրէշ, ինչպիսին էր Դիզրայէլին։

Ցարատև կռիւ, յաճախ և երկար ժամանակ գուցէ անյաջող՝ չնայելով երբեմն Նոյնիսկ իր լայն ծաւալին, — ահա ուր է մեր փրկութեան բանալին։ Պահպանե՛նք, շարունակե՛նք կռիւը, որպէսզի նա լայնանայ, ընդարձակի և ընդարձակելով՝ յարատևի—ահա դէպի մեր նպատակը տանող միակ ճանապարհը։ Շշեղուե՛նք այդ ճանապարհից, որ պատճառների և հետևանքների կապով պատմութեան մէջ հաստատուած օրէնքի ուժ ունի. չշեղուե՛նք այդ միակ ճանապարհից, որ սփռուած է յուսատու ապագայի գրաւիչ ծաղիկներով...

ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ *)

II

Ցաղա՛ր բարով, հպարտ սարե՛ր,
Թէ եմ առեր, ձեզ կուգամ.
Արծիւների ձէնն եմ լսեր —
Արծիւներին դէմ կուգամ...

Իմ հայրենի՛ք, կապուտ սարե՛ր,
Թշնամու շարք ձեր բոլո՛ր.
Դա՛շտ, անապա՛տ, արնոտ գետե՛ր,
Արագը խոր ու ոլո՛ր...

Հազար ձէնով, հազար սրտով
Արծիւների հետ կուգամ,
Հողի՛դ մեռնիմ հազար սրտով,
Իմ հայրենի՛ք, մերիկ ջա՛ն...

Բարով ձեզի, դար ու դուրա՛ն,
Բանձրիկ սարեր ու քարե՛ր,
Հազա՛ր բարով, հով ու դումա՛ն,
Ծովակ, ծմակ ու ձորե՛ր...

ՀԱՑ-ԳՈՒՍԱՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ
ՊԱՐՍԿԱ-ՏԱՃԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԼԽԻՑ

1 փետրուար

Վասպուրական գտացող զինատար խմբակը դեկտեմբեր 2-ին (1899), Ապաղայի Խազան հայ գիւղի սահմանից դուրս գալիս, նկատում է քիւրդերից։ Հավար է ընկնում։

Զինատարները առանց հրացան արձակելու արագ շարունակում են իրենց ճամբան. քիւրդերն էլ հաւար. գոռալով, չեն թողնում տղաների հետքը։ Վերջապէս ստիպուած մի հրացան են արձակում յամառ քիւրդերի վրայ։ Մէկը ձեռքից վիրաւորուում է։ Քիւրդերը յետ են դառնում միւս գիւղերի ցեղակիցներին օգնութեան կանչելու։

Կամաւորները գիշերը մինչև լոյս ճանապարհ են կըտրում, սակայն առանց ապահով դիրքի հասնելու։ Երբ լուսանում է, նրանք դեռ դաշտումն են լինում, որտեղ գետն անցնելիս թրջուում են մինչև կրծքերը։ Գետի միւս ափում կրակ են անում թրջուած շորերը չորացնելու։ Ցանկարծ տեսնում են, որ դաշտը սևացաւ ձիաւորներից։ Կրիտիկական ժամ է. ի՞նչ անել. դիրքերը շատ հեռու են, իսկ իրենք՝ թրջուած մինչև ոսկորները և անկարող խոյս տալու։ Կրակը հանգցնում են և վազում դէպի փոսերը ապաստանելու։

Քիւրդերը յարձակում են գործում զինատարների վրայ։ Երկուսին սպանում են։ Մնացած չորս հոգին խորամանկութեամբ իսկոյն պառկում են ընկերների դիակների հետ, և քիւրդերը, բոլորին էլ սպանուած կարծելով, վազում են դիակները կողոպտելու։ Երբ այնքան մօտենում են, որ հազիւ 200 քայլ է մնում, սուտմեռ չորսն էլ սկսում են միասին կրակել։ Քիւրդերը, միքանի զոհ և վիրաւոր տալով, սարսափած յետ են փախչում։

Արևը սկսում է բարձրանալ։ Կամաւորները, խմբապետ Յովհաննէսի կարգադրութեամբ, փոսերի մէջ յարմար դիրքեր բռնելով, երդւում են կռուել մինչև վերջին շունչը իրենց 2 ընկերների դիակների վրայ, և այսպէս, մէկ մէկի սիրտ տալով ու „Սանո, Յովհաննէս“ կանչելով, մնում են սպասողական դիրքի մէջ՝ պառկած, տակաւին սառած շորերով...

Ցանկարծ Մուստաֆա-բէգի համիդիէները, մօտ 600-ի չափ, գալիս շրջապատում են դրանց և „Ե՞ա Օմար“ սալաւաթ քաշելով՝ կատաղի յարձակում գործում։ Տղաներից երեքը սպանուում են, իսկ Յովհաննէսը, վիրաւորուելով, անկարող է լինում այլևս հրացան արձակել։ Երբ քիւրդերը բոլորովին մօտենում են, Յովհաննէսը ատրճանակով երկուսին վիրաւորում է և ընկնում անշնչացած։

Կուին մասնակցող քիւրդերից մէկը ասել է. „Եթէ ֆէդայիները թրջուած չլինէին, անկարելի պիտի լինէր նրանց մօտենալ. այդ մօսինների հետ կռուել. այդ մօսինների ահից էր, որ առաջին անգամ չվստահացանք քիչ ուժով յարձակում գործել“։

Ֆէդայիներից միմիայն Փուռթոյին ճանաչելով՝ գլուխը կտրում են և բերում խաչանցիներին ցոյց տալու։

Քիւրդերից սպանուում են ընդամէնը 13 հոգի և երեք հոգի էլ վիրաւոր ընկնում։ Սպանուածներից մի քանիսը հոգեւորականներ են, ճակատներից զարկուած։ Սրանց կանայք՝ ի նշան խոր վշտի՝ իրենց գլխի ծամերը կտրում են։

Ցեղափոխականները իրենց առաջին անգամ ընկնող ընկերների զէնքերը փչացնում են, որպէսզի թշնամու ձեռքը չ՝անցնեն։ Իսկ միւսների մօտ եղած զէնքի պատճառով քիւրդ ցեղապետների մէջ կռիւ է ծագում. նախապէս հարայի գնացող ցեղապետը չի հաճում միւսներին բաժին հանել, պատճառաբանելով, որ ըսպանուած քիւրդերը իր ձիաւորներից են։

Կառավարութիւնը, դէպքի մասին իմանալով, Բերկրիից զօրք է ճամբում քիւրդերի մօտ, պահանջելով ֆէդայիների հրացանները, Պոլիս ուղարկելու համար։ Քիւրդերը մերժում են տալու. միայն նահատակ ֆէդայիների դիակներն են տալիս, որ տանեն Բերկրի թաղելու։

Զինատարների մօտ գտնուած „Դրօշակ“-ի թերթերը

---

*) Այս վերնագրի տակ կը տպագրուեն „Դրօշակում“ ՀԱՑ-ԳՈՒՍԱՆԻ մի շարք քանաստեղծութիւնները, որոնցից առաջինը լոյս տեսաւ անցեալ տարուայ № 1-ում։ ԽՄԲ.

(№ 6 և 7, 1899 թ.) քիւրդերը կարդացնել են տալիս Հայերին ու սարսափով լսում Գուրգէնի կռիւների մասին։ Եւ այժմ Նրանց մէջ լուր է պտտում, իբր թէ „Ֆէդայիների կառավարութիւնը“ 6000 հոգի պիտի ուղարկի քիւրդերից վրէժ լուծելու։

ՆԱՄԱԿ ԵՐԶՆԿԱՅԷՆ

3 փետրուար

Թիւրք կառավարութիւնը իր հանրածանօթ հայաջինջ ծրագրի կիրառութեանց կէտ առ կէտ խնամով կը հետեւի։ Հայաստանի ամէն կողմերէ կոտորածի, թալանի հատ ու կտոր առնուած լուրերը օր օրի կը բազմապատկին. ամէն ուրեք կեանքի, հացի, պատուոյ խնդիր կայ։

Բերենք հոս անոնցմէ մի քանին։

Քաղաքէս 4 ժամ հեռաւորութիւն ունեցող (դէպ արեւելք) Բ ը թ ա ռ ի ճ գիւղի մէջ (մօտ 80 տուն թիւրք եւ հայ խառն) անցեալ տարի թիւրք երիտասարդ մը կը յաջողի ինչ-ինչ միջոցներով (իսարկէ բռնութիւնը եւ վախը ամէնէն մեծ տեղը կը բռնէ) հայ աղջիկ մը առեւանգել եւ ձայնը բոլորովին կորսնցնել։ Մօտերս, այսինքն երկու ամսի չափ առաջ, իրիկուան ժամը 2-ին ժամանակները, նոյն թիւրքը կը մտնէ Քերովբէ անուն անձի մը տունը եւ կը սպառնայ ըսելով. — «Օգնէ ինձի որ այս ինչ հայ աղջիկը տանիմ»։ Քերովբէն զայրացած կը պատասխանէ. «Անցեալ տարւայ գործած չահատակութենէդ քաշալերուեցա՞ր որ երկրորդել կ'ուզես»։ Այսպէս ձայնը բարձրացնելուն՝ դրացիները կը հաւաքուին, եւ թիւրք ու հայ բիրերով իրարու զարնել կը սկսին։ Այս պահուն Քերովբէն կը յաջողի իր հակառակորդը դանակով վիրաւորել եւ փախուստ տալով ապաստանիլ իր հօրաքրոջ տունը։ Վիրաւորեալը կատաղած, դէպի կեավուրները հակակիր ու թիւրքական հանրածանօթ հայհոյութիւնները բերանին եղող քանի մը համամիտներով, կը վազէ այն աղջկան տունը, որն ընտրած էր փախցնելու, եւ բռնի ներս կը մտնեն։ Տունը կը գտնուին եղեր աղջիկը եւ իր եղբօր կինը միայնակ. թիւրքը կը սկսի բռնի քաշքշել աղջիկը ըսելով. — «Այս վէրքը ես քեզի համար ստացեր եմ. դուն պէտք է որ գաս ու բժշկես քու ձեռքով»։ Հակառակ աղջկան արձակած վայնասունին ու ողբերուն, կը սկսի գետնաքարշ ընել խեղճը։ Միւս հարսը կը յաջողի դուրս ելլել ու հ ա վ ա ր ընել. դրացիները կը հասնին ու կ'ազատեն աղջիկը։

Թիւրքը տունէն դուրս եկած պահուն կը հանդիպի աղջկան հօրը, որ ցուպ իձեռին կաղ մ'է։ Հայրը բացատրութիւն կը պահանջէ սրիկայ թիւրքէն եւ ի պատասխան՝ գաւազանի հարուածներու տարափ մը կ'ընդունի իր գլխին ու կը նստաղի։ Թիւրքին ընկերացած խուժանը, որոյ պարագլուխն է յիշեալին հօրեղբօր որդին, տենդոտ աճապարանօք կը փութայ գտնել Քերովբը ու անկէ վրէժ լուծել։ Աստ անդ թափառելէ ետք՝ վերջապէս թիւրքերը կը մտնեն Քերովբի հօրաքրոջ տունը ու այդ չափահաս կինէն կը պահանջեն իր եղբօրորդին. նա կ'ուրանայ անոր մասին ոեւէ լուր ունենալը, եւ ահա կը սկսի բիրերու եւ ոտքերու հարուածներ խեղճ կնոջ գլխին։ Կինը, աւելի մեռած քան կենդանի, կ'ինայ գետին։ Այդ բաւական չէ. փոքրիկ տղայ մը, որ պառկած էր սենեկին մէկ անկիւնը, նա ալ ոտից կոխան ըլլալով, մարմինը սոսկալի կերպով կը ճմլի։ Թիւրքերը տան մէջ կը սկսին խուզարկութիւնը եւ Քերովբը կը յաջողին գտնել մարագին մէջ։ Այլեւս դիւրին է երեւակայել տասնեակ բիրտ ձեռքերէ յառաջ եկած ծեծի քանակն ու որակն։ Այսպէս թիւրքերը՝ գոհ իրենց կատարած լրբութիւններէն, կը մեկնին։

Յաջորդ օրը հայերը աղջիկը քաղաք կը փախցնեն, իսկ Քերովբի հօրաքոյրը մի քանի օրեր սոսկալի անկողնոյ ծառայելէ վերջ կը կնքէ իր մահկանացուն. 14 օր դիակը անթաղ կը մնայ, որպէսզի քաղաքէն բժիշկ եւ քննիչ երթալով քննէ ու ստուգէ մարմինը, բայց գիւղի պէկը, իր չահատակութիւններով ծանօթ Վ ա հ ի տ պէկը, ծեծի ու բռնութեան տակ թաղել կուտայ դիակը։ Միւս ճմլած փոքր տղան ալ ազատելու յոյս չկայ։ Ոճրագործները ազատ են։ Կառավարութեան բողոքած է. բայց արդիւնքը, կ'երաշխաւորեմ, ոչինչ կըլլայ, մանաւանդ որ վիրաւորեալ թիւրքը իր արդէն սպիացած վէրքին վրայ նոր վէրքեր կը բանայ դանակով։ Քերովբն ալ այժմ իր մարմնոյն ցաւած ու ճմլուածներով կը զբաղի։

Անցեալ տարւայ սեպտեմբեր 20-ին Դէրջանի քանի մը գիւղերը կողոպտուեցան քիւրդերու ձեռամբ։ Ահաւասիկ Դէրջանի թալնուած գիւղերը. Վժան, Ծաղնորի, Զանախճի, Պարտախճի, Շեխնոս եւ Ալորիկ։ Այս գիւղերը մահմետականով խառն են եւ աւարն ալ խառն եղաւ։

Նոյն սեպտեմբեր ամսան մէջ երեք հայեր, Գալուստ, Յարութիւն եւ Փիլիպոս, Անդրէաս գիւղաքաղաքէն վերադառնալու ժամանակ, վինչէսթէր հրացան մ'ունենալնուն համար ձերբակալուելով, 15-ական տարուան բանտարկութեան դատապարտուեցան, մինչդեռ թիւրքերը ոչ միայն ճանապարհների վրայ, այլեւ քաղաքին մէջ ազատ համարձակ ատրճանակ ու դաշոյն կը կրեն վրանին եւ կառավարութիւնը բնաւ դիտողութիւն չընէր։

Կառավարութեան օրէնքով 60 տարին լրացնող մարդ մը ոեւէ տուրք վճարելէ ազատ կը մնայ. գիւղերու մէջ այդ կարգի մարդիկը հաշուելով, հակառակ այդ օրինաց, մօտ 900 օսմ. ոսկոյ գումար մը կը պահանջի ատոնցմէ։ Մէկ պաշտօնեայ միայն բողոքած է այդ պահանջի դէմ, սակայն կառավարութեան հանոյթին արգելք ըլլալու մղդրանքով յանդիմանուած է։ Այժմ այդ խեղճերու տունները մտնելով՝ գտածնին կը գրաւեն։

Անցեալ տարւայ վերջերը քաղաքէս երեք ժամ հեռաւորութեամբ գտնուած ս. Ներսէս հայրապետի վանքը եւ մէկ քառորդ ժամ վարը գտնուած Գի անունով գիւղը, որ խլամով խառն է, բոլորովին աւարի տրուեցան Լոլանցի եւ Շեխհասանցի ըսած քիւրդ ցեղերէն։

Այդ գիւղէն կէս ժամ հեռու գտնուած Իրկան անունով գիւղին ջաղացքէն գիշերը, մէկ հայու մը ձեռք եւ ոտքը կապելով՝ տարին իրենց բնակարանը, եւ 25 թօփ մանուսայ տուգանք առնելով, արձակեցին։

Նոյն միջոցին Պալապան նահիյի մէջ ս. Թորոս անունով վանքը կողոպտեցին, երեք գիշեր իրարու վրայ միմիայն ոչխար ու եզ տանելով։

Ցիշեալ գիւղերի հայերը այլեւս բոլորովին յուսահատեկան քաղաքիս միթէսարիֆին դիմեցին։ Միթէսարիֆը անոնց տաւ 5-6 հատ հինցած, անպէտք իմնէլի հրացան, ըսելով. «Հրացան արձակելու կարիք չկայ, բայց քիւրդերը ձեր քով զէնք ըլլալը իմանան, այլեւս չեն գար»։ Թիւրք իշխանի գաղտնի նպատակը հետեւեալն էր. նա գիտէր, որ հայերը չեն կրնայ 5-6 փչացած հրացանով իրենց պաշտպանել, բայց ինքը կրնար նոր հրացանի հաշուով իր համար դրամ գանձել խեղճ գիւղացիներէն։ Տարեան՝ վեց ամիսը քիւրդերը կը թալնեն, իսկ վեց ամիսն ալ խլամական տէրութեան հագիւ կ'օգտէ։ Այս է մեր ոեւ օրը։

Վերջերս կառավարութեան մէջ նոր ոգեւորութիւն մը կայ։ Պ ա յ ր ա մ ը կը մօտենայ։ Պաշտօնեաները ամսական կ'ուզեն։ Դրամարկղները թափուր են։ Ի՞նչ ընել։ Նոր բան մը մտածել։ Թալանի կամ աւարի մը պէտքը յարմար կը դատուի, բայց աւելի նոր սիստէմով մը, պաշտօնական գոյն ունեցող ձեւով մը։ Ուստի կ'որոշի հայերէն դրամար մ'ալ կորզել զինուորական տուրքերէ առհաշիւ։ Այդ նօթի գայլերը կշտացնել պէտք է։ Դարձեալ կը ծանրանան հայոց վրայ։ Հարկահաւաքները՝ ժանտարմի եւ ոստիկանի ընկերակցութեամբ՝ սկսած են շուկաները եւ թաղերը ժուռ գալ։ Հ ա ս ա ծ ն ու ն կը խժդեն, հակառակ պարագային բանտ կ'առաջնորդեն։ Տեղւոյս առաջնորդը դիմում կ'ընէ միթէսարիֆ փաշային։ Արդիւնքը սա եղաւ, որ եղած հրամանին աւելի խիստ կերպարանք մը տրուեցաւ։ Ի՞նչ կ'ընէ մեր պատրիարքը։ Ի՞նչ բանի հանգեցան իւր դիմումները...

Այս է մեր վիճակ։ Ի՞նչ կը մնայ մեզ ընել, կը հարցնենք մեր պատուական արենակցայ ու ազգակցայ։ Երբ զրկուած ենք ամէն ինչէ, ըստ մեզ՝ կենսական միակ միջոց տակա-

ւթիւ մեր ձեռքն է. այդ տխուր կեանքի ամէն պատահականութեանց դէմ զ է ն ք ը պիտի ըլլայ մեր միակ պաշտպանը. այո՛, զ է ն ք ը, որմէ կախուած է այժմ իրաւունքը եւ արդարութիւնը. . .

Կը վերջացնեմ նամակս մեր ընկերներէն միոյն ՌԱՓԱՅԷԼ ՏԷՐՏԷՐԵԱՆԻ (Սուրէն) մահը գուժելով. որ մեռաւ այս գիշեր։ Մաքուր անցեալով եւ վսեմ ձգտումներով գործիչ մըն էր։ Հանգիստ ոսկրներուն իր սիրած հայրենիքի բազմաչարչար հողին մէջ։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

ՏԱՍՆԵՒՄԷԿԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ

Պետերբուրգ, 19 ապրիլ

Դուք երևի չգիտէք, որ բացի այն երկու դ ժ ո խ ա յ ի ն մ ե ք ե ն ա ն ե ր ի ց, որոնք կրում են „ժանդարմների վարչութիւն" և „ոստիկանութիւն" (գաղտնի և վարչական) անունները, Կովկասում կայ և մի այլ, թէև արտաքուստ անտեսանելի մարմին, որ նոյնպէս կոչուած է հսկելու կայսրութեան ներքին ապահովութեան վրայ։ Դա կ ա մ ա ւ ո ր ո ս տ ի կ ա ն ո ւ թ ի ւ ն ն է։ Դրա անդամները նոյնպէս պետական գանձարանից ամսի 20-ին ռոճիկ են ստանում, նոյնպէս շատ անգամ համազգեստներ են կրում, բայց իրենց ծ ա ռ ա յ ո ւ թ ե ա մ բ նրանք պաշտօնապէս ոստիկանութեան անդամ չեն, — այլ մէկը, դիցուք, ունէ „նորին գերազանցութիւն", մեծ մասամբ պաշտօնաթող, միւսը՝ նախկին գաւառապետ, երրորդը՝ կառավարչապետի ատեանի նախկին անդամ, մի ուրիշը՝ ժողովրդական դըպրոցների դիրեկտոր, գիմնազիոնի ուսուցիչ կամ անդամ դատաստանական պալատի, և այսպէս ըստ կարգին. . . Դրդուած „ներքին ոգևորութիւնից" և „արտաքին հովանաւորութիւնից", մէկը միւսից անկախ, առանձին-առանձին, առանց շատ անգամ իրար ճանաչելու, համոզուած, որ նոյնիսկ հասարակութիւնից ոչոք իրենց „գործունէութեան" մասին գաղափար չ'ունի, կատարում են „հայրենասիրական" մի մեծ պարտք — կանոնաւոր կերպով ուղարկում են Կովկասի բարձր իշխանութեան կամ ուղղակի այստեղ՝ Պետերբուրգ՝ զեկուցումներ, նամակներ և գրութիւններ՝ հաղորդելով այնպիսի վտանգաւոր նորութիւններ, որոնց գոյութեան մասին շատ անգամ տեղեկութիւն չ'ունին մինչև իսկ մեր ամենագէտ դժոխային մեքենաները — ժանդարմները և ոստիկանները։

Ահա այդպիսի պետական „վտանգաւոր նորութիւններից" մէկն էր այն, թէ Կովկասում հայկական ընկերութիւնները բազմացել են սունկի նման և իրենց օ ր ի ն ա կ ա ն դիմակի տակ շարունակում են ծառայել յոկ ա զ գ ա յ ն ա կ ա ն և ք ա ղ ա ք ա կ ա ն վտանգաւոր նպատակների։ Հիմնուելով մեծ մասամբ կամաւոր ոստիկանութեան ա պ օ ր ի ն ի տեղեկութիւնների վրայ, Պետերբուրգից 1894 թւին հրամանագրւում է կովկասեան բարձր իշխանութեան՝ „մանրամասն տեղեկագիր պատրաստել հայոց բարեգործական ընկերութիւնների ամբողջ գործունէութեան մասին և կարծիք յայտնել՝ թէ որքան անհրաժեշտ է նրանց գոյութիւնը"։ Պատահմամբ միայն՝ հարցի ուսումնասիրութիւնը ընկնում է մի բ ա ր ե խ ի ղ ճ պաշտօնեայի ձեռքը — տարաբախտաբար այժմ պաշտօնից հեռու — որը՝ չբաւականալով այն մանրամասն տեղեկագրերով, որ երկար տարիների ընթացքում տեղական իշխանութիւնը ստացել էր հայոց բոլոր ընկերութիւնների մասին, անձամբ ըսկսում է նոր հետազօտութիւններ անել և կազմում է մի բազմակողմանի տեղեկագիր։ Այդ տեղեկագրից պարզւում է, որ նախ՝ կատարելապէս սուտ է այն, թէ Կովկասի հայերը ունեն բազմաթիւ ընկերութիւններ։ Այդ միջոցին, այն է 1894 թւին, Կովկասում գոյութիւն ունէին հետևեալ ընկերութիւնները. Բաքւում՝ „Հայոց Մարդասիրական ընկերութիւնը", որ հիմնուած էր դեռ 1863 թւին, Թիֆլիսում՝ „Հայոց Հրատարակչական ընկերութիւնը" և „Հայուհեաց Բարեգործական ընկերութիւնը", երկուսն էլ հիմնուած 80-ական թւականներին, և „Կովկասեան Հայոց բարեգործական ընկերութիւնը", որը՝ համաձայն Կովկասի փոխարքայութեան ժամանակ հաստատուած իր կանոնադրութեան, իրաւունք ունի բաց անել իր ճիւղերը գաւառական քաղաքներում և որը օգտւելով իր այդ իրաւունքից, մօտ 15 տարուայ ընթացքում կարողացել էր բաց անել հազիւ 18 ճիւղեր, այն էլ այնպիսի խոշոր քաղաքներում, ինչպէս Երևան, Բաթում, Ալեքսանդրապօլ, Շուշի, Ախալցխա, Նախիջևան, Ախալքալաք ևայլն։

Նոյն տեղեկագրից պարզւում է և մի այլ հարց — այն, որ բոլոր ընկերութիւնները տ ա ռ ա ց ի կերպով և ամենամեծ խստութեամբ հետևել են իրենց կանոնադրութիւններին — բոլորն էլ հաստատուած կառավարութիւնից — և երբեք մազի չափ իսկ չեն շեղուել իրենց նպատակից։ Ի՞նչ է այդ նպատակը. — Հաց տալ աղքատներին, մի քանի ռուբլով օգնել չքաւոր աշակերտներին կամ ուսանողներին, պահել ունէ դպրոց կամ նպաստել կարօտ մի ուսումնարանի, ինչպէս արել են այդ Մարդասիրական կամ Բարեգործական ընկերութիւնները, և կամ տպագրել մի քանի գրքեր, ինչպէս արել է Հրատարակչական ընկերութիւնը—գրքեր, որոնք, ինչպէս ամէն-մի տպագրուող տող Ռուսաստանում, պիտի ստանան ցենզորի թոյլտուութիւն, ապա ուրեմն երբեք հակակառավարչական և „վտանգաւոր". լինել չեն կարող. . .

Շատ հետաքրքիր է յիշատակել այն խօսքերը, որ վերը յիշած պաշտօնական անձը այդ առիթով ասել է իրեն լաւ ծանօթ և բոլորովին վստահելի մի հայի Թիֆլիսում.

— „Ես ամենայն խստութեամբ ուսումնասիրեցի այդ ընկերութիւնների երկար տարիների գործունէութիւնը և ոչ միայն ապօրինի ոչինչ չգտայ, այլ համոզուեցի, որ նրանք բոլորն էլ անպայման համակրելի են և օգտաւէտ։ Եւ ինչպէս անհամակրելի գտնեմ մի ընկերութիւն, որը՝ ըստ իր կարողութեան, աղքատին հաց է տալիս, չքաւորին ուսում, որբին ապաստան, ժողովրդին գիրք։ Ինձ նկատել են, որ այդ ընկերութիւնների թիւը շատ մեծ է, պէտք է կրճատել։ Ճշմարտութեան դէմ կը լինի համաձայնուել այդ կարծիքի հետ։ Կովկասում աւելի քան $1^1/_2$ միլիոն հայ կայ, և այդ ահագին ազգաբնակութիւնը ունի ընդամէնը չորս զատ-զատ ընկերութիւն ու դրանցից մէկը միայն՝ իր ճիւղաւորութիւնները։ Բայց և այնպէս — աւելացնում է պաշտօնեան — Պետերբուրգին գոհացում տալու համար պէտք է ունէ մէկը փակել։ Սակայն ո՞րը։ Հրատարակչական ընկերութի՞ւնը։ Բայց ի՞նչպէս, քանի որ այդ հիմնարկութիւնը իր ան-

սակի մէջ մի հատ է և ուրեմն շատ համարել չի կարող։ Հայուհեաց Բարեգործական ընկերութիւնը։ Բայց նա էլ հայ կանանց միակ ընկերութիւնն է և կատարելապէս անվնաս, քանի որ (մի փոքր ժպտախառն)... խոհարարական դասընթացքներ է պահում և մեզ համար լաւ կերակուր, ուտելիքներ է պատրաստում։ Արդասիրական ընկերութեան մասին վերջնական կարծիք յայտնելը՝ յատկապէս Բագուի նահանգական իշխանութեան գործն է. մնում է ուրեմն Կովկասեան Հայոց բարեգործական ընկերութիւնը, որ անպայման համակրելի հիմնարկութիւն է, այնքա՜ն տարի գոյութիւն ունի և գտնւում է միանգամայն վստահելի անձանց ղեկավարութեան տակ։ Ուրեմն, ի՞նչ անեմ, ի՞նչպէս լեռութիւն տամ Պետերբուրգի տրամադրութեան"...

Եւ երկար մտածելուց յետոյ բարեմիտ պաշտօնեան բացականչում է. „Լա՜ւ միտք. թող փակեն այնպիսի աննշան ճիւղեր, ինչպէս են Սընախի, Թելավի, Գօրու ճիւղերը, եթէ ուզում են, որ Թիւրը պակաս լինի"։ Եւ կրկին մի փոքր մտածելուց յետոյ՝ աւելացնում է. „Սակայն այդ ճիւղերի տարեկան բիւդժէն 300-400 ռուբլու հաղիւ է հասնում. ի՞նչ պիտի անեն այդ անմեղ, այդ փոքրիկ ճիւղերը տարեկան 300 ռուբլով ռուսաց պետութեան դէմ... Չէ՛, ես այդ էլ չեմ անի"... Եւ զեկուցում տուեց, որ գոյութիւն ունեցող ընկերութիւնները ոչ շատ են, ոչ աւելորդ, ոչ էլ վնասակար։

Բայց ահա հաղիւ անցկացաւ չորս տարի, երկրում տիրեց Գօլիցինեան խենթ, հիւանդոտ ռէժիմը, և ամէն ինչ փոխուեց, ամէն ինչ դարձաւ աւելորդ, վնասակար, աննպատակայարմար։ 1898 թուին կայսեր ներկայացրած իր մեծագղորդ դակլադի մէջ կառավարչապետ Գօլիցին, իմիջի այլոց, ահա ինչ է գրում.

„Այդ բարեգործական ընկերութիւնները աւելի ուշադրութիւն են դարձնում քաղաքականութեան քան բարեգործութեան վրայ եւ դրեթէ կովկասեան բոլոր քաղաքներում ունին մասնաճիւղեր։ Այդ ընկերութիւններից մէկն է „Բարեգործական ընկերութիւնը", որի կեդրոնատեղին է Թիֆլիս եւ որի նպատակն է Կովկասի հայերի մէջ լուսաւորութիւն տարածել ու նիւթապէս օգնել նրանց կարօտներին։ Սակայն ընկերութեան տարածած լուսաւորութիւնը ազգային նեղ մտքով է կատարւում։ Նրա փողերը յաճախ յատկացնւում են օտար երկրների մէջ հայեր դաստիարակելու — մի պարագայ, որ հակասում է ռուսաց կառավարութեան պետական սկզբունքներին... Առանց ուրանալու այն օգուտը, որ անհատներ ու մասնաւոր ընկերութիւններ կարող են մատուցանել կրթութեան գործին, այն պայմանով միայն՝ որ կատարելապէս վստահելի լինեն,—ես կարծում եմ, որ հայոց այս ընկերութիւնները, իրենց առանձնայատուկ հանգամանքների պատճառով, արժանի չեն վստահութեան"... ուստի եւ առաջարկում է կայսրին՝ «փակել այդ բարեգործական ընկերութիւնները»։

Այդ առաջարկը ընդունեց։

1899-ին հայոց բոլոր ընկերութիւնները փակուեցին՝ բացի Հրատարակչական ընկերութիւնից։ Մի „հայրախնամ" զիջողութիւն միայն արեց կառավարութիւնը— յայտնեց, որ փակւած ընկերութիւններից ամէն-մէկը կարող է վերաբացուել, միմիայն համաձայն այն կանոնադրութեան, որ մշակել է ինքը կառավարութիւնը, և դրա համար ամէն մի ընկերութիւն պիտի առանձին-առանձին խնդիրք ներկայացնի կովկասեան բարձր իշխանութեան։ Նոր կանոնադրութեան համաձայն վերաբացուեցին միմիայն երեք ընկերութիւն՝ Արդասիրական ընկերութիւն Բագուում, և Թիֆլիսում՝ Հայուհեաց Բարեգործական ընկերութիւնը ու Կովկասեան Հայոց բարեգործական ընկերութիւնը, նոր անուան տակ, այն է „Թիֆլիսի Հայոց Բարեգործական ընկերութիւն"։ Գաւառական ճիւղերը դատապարտուեցին վերջնական մահուան։

Վերաբացուած ընկերութիւններին տուած նոր կանոնադրութեամբ նրանց գործունէութեան նախկին շատ կէտերը,—դպրոցներ պահել, օգնել ուսանողներին, նպաստել կարոտ գրողներին, հիմնել աշակերտական հանրակացարաններ, վերջապէս բաց անել գրադարաններ— ոչնչացրուեցին։ Իրաւունք չկայ կատարել և ոչ մէկը այդ օգտակար գործերից. արգելւում է նպաստել ուսման, ընթերցանութեան, լուսաւորութեան։ Մուրացկանները հաց կ'ուզեն, մի քանի կոպէկ տէր — ուրիշ ոչինչ։ Այդ է նոր կանոնադրութեան ոգին։ Եւ միայն մուրացկաններին օգնելու մէջն է, որ կառավարութիւնը „քաղաքական ոգի" չէ տեսնում. — դրանից դուրս ամէն ինչ քաղաքական է։

Այդ կարգադրութեան ամբողջ հրէշաւորութիւնը ցոյց տալու համար, ես մի փոքր կանգ կ'առնեմ մի հարցի, գրադարանների հարցի վրայ, ձեր առաջ մի ուշագրաւ պատկեր նկարագրելու համար։

Գրադարանը Կովկասում նոյնքան հազւագիւտ բան է, որքան Պետերբուրգում տրօպիքական բոյսը։ Պատճառը պարզ է. ինքը կառավարութիւնը գրադարան-ընթերցարաններ չէ հիմնում, և եթէ մասնաւոր անձինք կամ հասատութիւններն էլ ուզում են հիմնել, այնքան խոչնդոտներ, դժւարութիւններ և ճնշումներ է գործ դնում, որ ամէնքն էլ հրաժարւում են այդ մտքից։ Դիցուք, մի մասնաւոր մարդ, նոյնիսկ դրամական զոհաբերութիւն յանձն առնելով, ուզում է հանրամատչելի ընթերցարան-գրադարան հիմնել իր մայրենի քաղաքում։ Բայց ուզելը բաւական չէ։ Պէտք է թոյլտուութիւն։ Սակայն քանի-քանի՜ ամիսներ և նեղութիւններ են հարկաւոր այդ թոյլտուութիւնը ստանալու համար— ահա կը տեսնէք։ Ամէնից առաջ պէտք է դիմել նահանգապետին, իհարկէ խնդրագրով, „մարկան" վրան փակցրած։ Նահանգապետը խնդիրքը ուղղում է ոստիկանապետին կամ գաւառապետին՝ եթէ խնդրատուն ապրում է ուրէ գաւառական քաղաքում։ Վերջինը՝ պրիստավին։ Վա՛յ, եթէ խնդրատուն երբեւիցէ, նոյնիսկ իր պատանեկութեան ժամանակ, 20-30 տարի առաջ, եղել է կասկածի տակ կամ մասնակցել է ուրէ „քաղաքական" գործի։ Այդ դէպքում պատասխանը պարզ է. — „Ձեր խնդիրքը թողնւեց առանց հետևանքի"։ Աւելին. խնդրատու անձը նոյնիսկ պէտք է իր „լաւ" կողմերով յայտնի լինի ոստիկանութեան։ Ուստի ամէն-մի անձ, որ ոչ թէ համարւում է քիչ-շատ կասկածելի՝ այլ լոկ անյայտ է, երբեք չի էլ փորձում ուրէ այդպիսի դիմումն անել. դրա համար միշտ առաջ են գցում ոստիկանութեան համար կատարելապէս „վստահելի" անձնաւորութիւն։ Սակայն՝ չնայած այդ պահանջներին, ոստիկանութիւնը դարձեալ պիտի մանրամասն տեղեկութիւններ հաւաքի։ Մի օր պրիստավ է գալիս, միւս օրը մի աւելի ստոր ոստիկան, մի այլ անգամ դաղտնի ոստիկանութեան պաշտօնեայ, և ձեր տան շուրջը, ձեր թաղում,

հարևաններից և շատ անգամ ձեր անձնական թշնամիներից „փաստեր" են հաւաքում։ Մի ուրիշ թշնամու ակնարկ, մի ուրիշ հարբան պրիստավի կապրիզ՝ բաւական է, որ խնդրատուն անյարմար համարի և այս դէպքում։ Անցնում է 5-6 ամիս, և ահա ստացում է դարձեալ նոյն միակերպ պատասխանը. „Ձեր խնդիրը թողնուեց առանց հետևանքի"։ Բայց վերցնենք լաւագոյն դէպքը, այսինքն՝ երբ խնդրատուն ուրիշ „անյարմարութիւն" չունի։ Արգելքներ այնուամենայնիւ պակաս չեն։ Նախ կառավարութիւնը առհասարակ շատ կասկածելի է համարում ամէն-մի գրադարան, քանի որ գրադարանը տարածում է գրագիտութիւն, իսկ դա „սկզբունքով" վնասակար է, եթէ կրօնական սահմաններից դուրս է։ Բայց կայ և ուրիշ հանգամանք։ Դուք ուզում էք, դիցուք, ձեր գրադարանը ժանագին դարձնել, որպէսզի մատչելի լինի քաղաքի ամբոխին. ձեզ նկատում են, որ „անյարմար է ամբոխով զբաղուել", և ստիպում են գրադարանի վճարը աւելի թանկ անել, որպէսզի նա մատչելի լինի միմիայն ապահով դասակարգին։ Ուրիշ խօսքով՝ ձեր ձգտումը՝ ծառայել չքաւոր ժողովրդի ընթերցանութեան գործին — խափանուած է, գոնէ մասամբ։ Ենթադրենք, որ կարգադրուեց վճարի հարցը։ Այդ ժամանակ հարց է յարուցում տեղի մասին։ Եւ եթէ դուք ուզում էք գրադարանը հիմնել քաղաքի ուրիշ յետ ընկած մասում, ուր ապրում են չքաւորները, մի այնպիսի տեղ, ուր ժողովուրդը աւելի յարմարութիւններ ունի յաճախելու, ձեզ նկատում են, որ դա անկարելի է, յայտարարելով, որ գրադարանը պիտի բաց անել քաղաքի բանուկ մասում, բանուկ փողոցի վրայ, որպէսզի „տպարանական տեսուչը (նա, որ հսկում է գրադարանների վրայ) միջոց ունենայ ամէն րոպէ մտնել և հսկողութիւն կատարել"։ Ընդունենք, որ այդ զիջողութիւնն էլ արեցիք. այնուհետև հարց է ծագում, թէ ով պիտի լինի գրադարանապետը, ի՞նչ եկամուտներով պիտի պահի գրադարանը, ո՞վ պիտի լինի պատասխանատու անձը, եթէ հիմնարկողը բացակայ է քաղաքից։ Վերջապէս, հազար ու մի դժուարութիւններով, մի դիւանատնից միւսը վազվզելով, դուք այդ անլուր կապրիզներին էլ լուութիւն էք տալիս։ Սակայն դարձեալ վախճանը հեռու է։ Սկսւում է նոր „հոգեհանութիւն" և ամենախիստը, — գրքերի և լրագրերի հարցը։ Ի՞նչ գրքեր պիտի պահէք գրադարանում։ Միթէ՞ այն, որ ձեր կարծիքով ամէնից օգտակար է կամ ձեր յաճախորդներին ցանկալի։ Քաւ լիցի. այդպէս մտածել Ռուսաստանում — դա նշանակում է խելագար լինել։ Դուք պիտի ներկայացնէք գրքերի ցուցակ։ Այդ ցուցակը ուղարկւում է ցենզուրական հիմնարկութեանը, որ ինքը արդէն ունի նախօրօք կազմած՝ արգելուած գրքերի ցուցակ, և նա համաձայն իր ցուցակի՝ ուղղագրում է ձեր ցուցակը։ Սակայն այդ ցուցակն էլ մէկ չէ։ Ցուցակ էլ կայ՝ ցուցակ էլ։ Կան գրքեր, որոնք արգելուած են միմիայն դպրոցական գրադարանների համար. կան գրքեր, որոնք թէև թոյլատրուած են դպրոցական գրադարանների համար, բայց ոչ մի դէպքում տեղ չեն կարող գտնել ժողովրդական գրադարաններում. վերջապէս կան գրքեր, որոնք թէև գտնւում են ամէն-մի կլուբի գրադարանում, բայց իրաւունք չկայ պահել մի ուրիշ հանրամատչելի գրադարանի մէջ։ Ուրիշ խօսքով՝ մի օրինական քաոս, որ իրաւունք է տալիս իշխանութեան հարց յարուցանել, թէ ինչ տեսակի գրադարան էք ուզում հիմնել, ովքեր պիտի կազմեն յաճախորդների գլխաւոր տոկոսը, կարճ՝ նորանոր դժուարութիւններ, նորանոր ճնշումներ գրադարանի բացման առաջ։

Երևակայեցէք մի րոպէ, որ երկար ամիսներ քաշքշելուց յետոյ — շատ անգամ այդ ձևականութիւնները տևում են ութ-ինն ամիս, նոյնիսկ մի ամբողջ տարի — վերջապէս հրաշքով, այո հրաշքով, ստանում էք թոյլտուութիւն և բաց էք անում գրադարանը... Ահա և առաջին այցելուն... բայց դա ընթերցող չէ, այլ... ոստիկան։ — „Թոյլտուութիւն ունի՞ք"։ Ցոյց էք տալիս։ Մի քանի ժամից յետոյ դարձեալ ոստիկան՝ „Համեցէք ոստիկանատուն. կանչում են"։ Մի օր անցած գալիս է ինքը տպարանական տեսուչը (ինսպեկտոր տիպոգրաֆիի), գրադարանի անմիջական իշխանութիւնը։ Եւ եթէ նա մի կասկածոտ, անհանգիստ, կապրիզոտ անձն է, վայն եկել ձեզ տարել է։

Մի փոքրիկ միջադէպ։

X քաղաքի հայոց մի գրադարան մտնում է տպարանական տեսուչը։

— Ցոյց տուէք գրացուցակը։ Տալիս են։

— Գրացուցակից դուրս ուրիշ գրքեր, յոյս ունիմ, չունէք։

— Իհարկէ ոչ։

— Սա ի՞նչ գիրք է, բացականչում է տեսուչը թերթելով ցուցակը և մատը դնելով մի գրքի անուան վրայ. — „Վաղարշապատ մայրաքաղաքն հայոց"։

— Դա պատմական գիրք է, թոյլատրուած կառավարութիւնից և ձեր ձեռքով։

— Ի՞նչ պատմական, ի՞նչ թոյլտուութիւն։ „Մայրաքաղա՞ք հայոց"... Դա անկարելի է։

— Այո... բայց „մայրաքաղաք հայոց", որ գոյութիւն ունէր սրանից 1500 տարի առաջ, 4-րդ դարում, և ոչ այժմ, բացատրում է խոնարհաբար գրադարանապետը։

— Այդ միևնոյն է. ես արգելում եմ այս գիրքը։

— Սա ի՞նչ է, աւելի զայրացած գոչում է տեսուչը, ձեռքը դնելով մի այլ գրքի վրայ՝ „Վէրք Հայաստանի"։

— Դա էլ թոյլ է տրուած ձեր ցուցակով. Աբովեանի աշխատութիւնն է այդ — աւելացնում է գրադարանապետը յաջողութեան ժպիտը երեսին — գրուած աւելի քան կէս դար առաջ, որ այնքան համակրանքով է խօսում ռուսների և ռուսաց տիրապետութեան մասին։

— Այդ համակրութեանը ես հաւանում եմ, բայց անունը՝ „Վէրք Հայաստանի" չեմ հաւանում։ Չկայ Ռուսաստանում Հայաստան, ուրեմն չի կարող լինել և Հայաստանի վէրք։ Այսօրուանից այդ գիրքն էլ եմ արգելում։

Եւ այսպէս արգելք արգելքի վրայ։

Ու այս անգլուխ չինովնիկների շնորհիւ, ամսէ ամիս, տարէ տարի լանջանում, ուռչում է հայերէն, լեհերէն և մանաւանդ ռուսերէն արգելուած գրքերի ցուցակը։ Շատերը արգելւում են, որովհետև միապետական ոգւով չեն գրուած, չեն ջատագովում ուղղափառութիւնը։ Միւսները՝ թէև բովանդակութեամբ վտանգաւոր չեն, բայց այնպիսի գրողների աշխատութիւն են, որոնք իրենց կեանքում եղել են հակակառավար-

չական, յեղափոխական կամ էմիգրանտ: Մէկ գրքի անունն է վտանգաւոր, միւսի ոճն է կատաղի, երրորդը դուր չի գալիս ուղղափառ միտրոպոլիտին: Մէկը ազատամտական հակումներ ունի, մի ուրիշը բաւականաչափ բարոյական չէ,— և ահա մէկ-մէկ այդ բոլորը արգելւում, հալածւում, խլւում է գրավաճառներից ու գրադարաններից և մտնում խարոյկի կամ ոստիկանական արգելքի...

— Եթէ այսպէս շարունակւի — ասել է մի ռուս գրող — շատ չանցած՝ հարց կը ծագի, թէ արդեօք Ռուսաստանում արգելւած գրքերի ցուցակն է աւելի մեծ, թէ թոյլատրւածներինը...

Այդ դժոխային պայմաններում մասնաւոր մարդիկ շատ քիչ կամ երբեք յանձն չեն առնում գրադարաններ բաց անել, մանաւանդ որ դա շահաւէտ գործ էլ չէ, և սովորաբար բարեգործական հիմնարկութիւններն են, որոնք ձեռնարկում են դրանց: Դա է ահա պատճառը, որ ստիպում էր հայոց բարեգործական ընկերութիւններին՝ հազար ու մի նեղութիւններով հաւաքած իրենց միջոցներից՝ մաս հանել գրադարաններ հիմնելու համար այնպիսի թէև մեծ, բայց գրադարաններից զուրկ քաղաքներում, ինչպիսին է Թիֆլիս, Ախալցխա, Շուշի, Ախալքալաք, Հին-Նախիջևան: Տեսնելով այդ երևոյթը, կառավարութիւնը դեռ սրանից 5-6 տարի առաջ վճռեց սահմանափակումներ դնել և այս նպատակով փոխեց Կովկասեան Բարեգործական ընկերութեան կանոնադրութեան այն յօդւածը, որը իրաւունք էր տալիս ընկերութեան կենտրոնին՝ բաց անել ճիւղեր իր ցանկացած տեղում: Ջնջելով այդ յօդւածը՝ կառավարութիւնը մտցրեց կանոնադրութեան մէջ մի այլ յօդւած, ուր ասւած է.—ամէն անգամ, երբ կենտրոնը կամենայ մի ճիւղ բանալ, պէտք է պատշաճաւոր ճանապարհով դիմի Պետերբուրգ՝ ստանալու բարձրագոյն թոյլտւութիւն.— ուրիշ խօսքով՝ սահմանափակւեց նոր ճիւղեր բանալու իրաւունքը, հետևաբար և նորանոր գրադարաններ հիմնելու հնարաւորութիւնը: Այդ նոր յօդւածի պատճառով մի քանի քաղաքներ, ինչպէս նահանգական Գանձակ քաղաքը, չնայելով որ մի քանի տարի աշխատեցին՝ չկարողացան հիմնել իրենց մօտ բարեգործական ընկերութեան ճիւղ և հետևաբար՝ նաև գրադարան:

Իսկ հետևանք այդ վ ա ն դ ա լ ա կ ա ն քաղաքականութեան, այդ խաւարամոլ ձգտման, մեր առաջ կանգնած է հետևեալ ողբալի պատկերը.—20 հազար բնակիչ ունեցող Ախալցխայում կար մի հատ գրադարան— փակեցին: 25 հազար բնակիչ ունեցող Շուշում՝ մի գրադարան — փակեցին: 15 հազար բնակիչ ունեցող Ախալքալաքում մի գրադարան — փակեցին: 10 հազար բնակիչ ունեցող Հին-Նախիջևանում մի գրադարան— փակեցին: Վերջապէս 150 հազար բնակիչ ունեցող Թիֆլիսում, ուր Բարեգործական ընկերութեան նորակազմ մատենադարանը պիտի լինէր միակ լուրջ և հանրամատչելի հիմնարկութիւնը — փակեցին: Թոյլ չտւին գրադարան բաց անել Ալեքսանդրապօլում, ուր 30 հազար բնակիչ կայ, Գանձակում և Երևանում, որոնք երկուսն էլ նահանգական քաղաքներ են և ունին իւրաքանչիւրը 25 հազար բնակիչ, և ուրիշ շատ փոքրիկ քաղաքներում, ուր գրադարանը պիտի կազմէր միակ ճ ր ա գ ը՝ ընդհանուր խ ա ւ ա ր ի մէջ...

Փակեցին դպրոցները, փակեցին բարեգործական ընկերութիւնները, փակեցին գրադարանները — երկար տարիների՝ մաշող, անթիւ ձեռքեր ու անսահման եռանդ պահանջող այդ կրթական օ ջ ա խ ն ե ր ը: Փակւած դ պ ր ո ց ի տխուր, սրտաճմլիկ աւերակների դիմաց՝ յանդուգն յաջողութեամբ գլուխ է բարձրացնում գ ի ն ե տ ո ւ ն ը, իսկ հալածական գրադարանների փոխարէն աճում են հ ա ս ա ր ա կ ա ց տ ն ե ր ը: Եւ ժողովուրդը՝ զուրկ կրթական հիմնարկութիւններից, գրոհ է տալիս դէպի մ ա ր մ ն ա ւ ո ր զւարճութիւնների վայրերը: Մէկը հալածւում է, միւսը հովանաւորւում և հետևաբար մէկը պէտք է ծաղկի, միւսը թառամի: Եթէ դա է ռուսաց կառավարութեան տենչը — աչքը լոյս: Դա իրագործւած է...

Ե. ԱԿՆՈՒՆԻ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՎԵՑ ԶԻՆԱՏԱՐ ՆԱՀԱՏԱԿՆԵՐ

Առաջ ենք բերում մի քանի կենսագրական տեղեկութիւններ այն վ ե ց զ ի ն ա տ ա ր նահատակների մասին, որոնց վարած կռւի մանրամասները ընթերցողը կը գտնի „Դրօշակի" այս համարի պարսկա-տաճկական սահմանագլխից գրած թղթակցութեան մէջ: Մեռածներից չորսի պատկերը տպագրում ենք սրա հետ միասին, և շատ ցաւում ենք, որ միւս երկուսի՝ Յովհաննէս Աւետիսեանի և Սանօ Յարութիւնեանի պատկերները չկան, իրենց ընկերների կողքին դնելու համար:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՒԵՏԻՍԵԱՆ, 27 տարեկան, շատախցի: Վասպուրականում Դաշնակցական կազմակերպութեան մուտք գործելու օրից՝ իր փոքրիկ խմբով յարում է նրան և գործում է „Դաշնակցութեան" դրօշակի տակ: 1895 թ. իրենց գիւղի մօտից ռէս Սօսնի վրայ ատրճանակ արձակելով երեք տեղից վիրաւորում է: Այդ դէպքի պատճառով փախստական լինելով, 1896 թւին, դեռ Վանի կոտորածից առաջ, դաշնակցական խմբի հետ անցնում է Պարսկաստան, որտեղ Դէրիկի կռւից ազատւելով՝ նոյն խմբի հետ Սալմաստում $1\frac{1}{2}$ ամիս տանջւում է բանտում: 1897-ին մասնակցում է Արշաւանքին տասնապետի օգնականի պաշտօնով: 1898 թւի սեպտեմբերին՝ նորից զինատար խմբի հետ մտնում է Վասպուրական և մի ամբողջ տարի գործում է Վանի գիւղերում: 1899 թւի հոկտեմբերին վերադառնում է Պարսկաստան՝ զէնքերի փոխադրութեան պաշտօնով: Յովհաննէսը իր խոհեմութեամբ և ճարպիկութեամբ ընկերների աչքի լոյսն էր դարձել: Վերջերս իր գործունէութեամբ այնպիսի յոյսեր էր ներշնչում, որ Վասպուրականի կոմիտէն գրում էր. „կը յուսանք որ Շէրօյի տեղը բռնէ": Այո՛, Շէրօյի գործունէութեան չ՚արժանացրեց նրան բախտը, սակայն Շէրօյի պէս քաջարի կռւելով՝ կեանքը թանկ ծախեց Ապաղայի դաշտում:

ՍԱՆՕ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, 23 տարեկան, Վանի կողմերից, ծնողների մինուճար զաւակ: 1896 թւին Վանում տեղի ունեցած կռիւներին մասնակցելուց յետոյ, Աւետիսեանի (արմէնական) խմբի հետ թողնում է Վաս-

պուրականը։ Ճանապարհին՝ Զուխայի լեռներում, Աւետիսեանից դժգոհ և Մուշեղի խմբին միացած, „չաշնի“ (պիստօնի) հրացանով քաջաբար կռւում է քիւրդերի դէմ և իվերջոյ անվտանգ մտնում է Պարսկաստան։ Այստեղ պարսից կառավարութիւնից բանտարկւում է, բայց յետոյ ազատւում։ Մասնակցում է 1897 թւի արշաւախմբին։ Այդ ժամանակ նա կռւելիս է եղել Պիծի Աշոտի տասնեակում ամենավտանգաւոր դիրքում, Խանասորի հովտի Թավրա կոչւած բլուրի վրայ, ուր ամբողջ տասնեակից ազատւեցին միայն 3 հոգի ողջ և 2 վիրաւոր։ Վիրաւորներից մէկը — աջ թեւի արմունկից — Սանօն էր։ Այդ վէրքը շատ վիշտ պատճառեց նրան, սպառնալով զրկել հրացան արձակելու հնարաւորութիւնից։ Թեւի վէրքը մի տարի տևեց. օպէրացիաների ենթարկւեց հանգուցեալը ասորի բժիշկ Իւխաննայից և Ուրմիի եւրոպացոց հիւանդանոցում, բայց դրանք զգալի օգուտ չտւին նրա գօսացած արմունկին։ Չէր կարողանում բանեցնել մատները հրացանի ոտը քաշելու համար։ Վերջապէս պատահմամբ մի ասորի բայթալ վերջնականապէս բուժեց նրա արմունկը։ Թեւը առողջանալուն պէս՝ Սանօն միանում է, 1898 թւի աշնան, երկրորդ զինատար խմբին։ Իր պարտքը կատարելուց յետոյ, 1898-ի ձմեռը գնում է Կովկաս՝ աշխատանքի։ 1899-ի գարնանը նորից անցնում է Պարսկաստան զէնքերի փոխադրութեան գործով զբաղւելու։ Ժիրախտաբար հայրը այս տարի վախճանւում է։ Մայրը մի քանի անգամ նամակներով Սանօյին տուն էր կանչում, բայց ապարդիւն։ Վերջապէս, տեսնելով որ տղան չէ գալիս, ինքը՝ հազարումի նեղութիւններ քաշելով, եկաւ տղայի յետևից։ Բայց Սանօյի համար շատ դժւար էր բաժանւել գործից. համոզեց մօրը և վերադարձրեց ասելով. „Դու գնա, ես իմ եղբայրներիս հետ կռւգամ“։ Խեղճ մայրը մինչև այս օր էլ դեռ աչքը ճամբին՝ սպասում է իր միւնուճար զաւակ Սանօյին գրկելու... Բայց Սանօն Մայր Հայրենիքը աւելի սիրեց քան հարազատ մօրը և ապագայի մի նոր սրբատեղի կանգնեցրեց, իր և ընկերների դիակներից, Ապաղայի դաշտում...



ՄԻՆԱՍ ՕՀԱՆՆԷՍԵԱՆ ԳՐԻԳՈՐ ԽԱՉԱՏՐԵԱՆ

ՄԻՆԱՍ ՕՀԱՆՆԷՍԵԱՆ, 25 տարեկան, Կարճկանի կողմերից։ Մասնակցել է 1898 թւի սեպտեմբերին Բագրեւանդից Խլաթ գնացող զինատար խմբի յաղթական կռիւներին։ Այդտեղից անվտանգ Վան հասնելով, նա միացել էլ Շատախցի Յովհաննէսին և գործում էր նրա հետ։

— **ԳՐԻԳՈՐ ԽԱՉԱՏՐԵԱՆ**, 20 տարեկան, Բ...ի կողմերից։ Շատախցի Յովհաննէսը, գաւառներում պտտելիս, բաւական ժամանակ ապաստանում է Գրիգորենց տունը։ Վերջինի հայրը, իմանալով, որ Յովհաննէսը անցնելու է Պարսկաստան՝ զէնքի փոխադրութեամբ զբաղւելու, իր միակ զաւակին ինքն է յանձնում Յովհաննէսին ասելով. „Գնա՛, տղաս, իմ միակ ժառանգս դու ես, բայց քեզ տւեցի ազգիս. գնա՛, զոհւիր ազգիդ համար“։ Որքան յիշում ենք, յայտնի դէպքերից սա երկրորդ օրինակն է, որ ծնողը սրտաբուխ նւէր է բերում իր որդուն Հայրենիքի սուրբ սեղանին (առաջինը եղել է Կուկունեանցի տրշաւանքի ժամանակ)։



ԽԱՉԻԿ ՍԱՐԳՍԵԱՆ ՓՈՒՐԹՕ ԳՐԻԳՈՐԵԱՆ

ԽԱՉԻԿ ՍԱՐԳՍԵԱՆ, 26 տարեկան, Թիմուր գաւառից։ Սարգսեանի անցեալից դժբախտաբար տեղեկութիւններ չունենք։ Խմբին մասնակցեց ծայրայեղ վճռականութեամբ և տմարդ թշնամու դիմաց՝ Ապաղայում հերոսի պսակը տարաւ։

ՓՈՒՐԹՕ ԳՐԻԳՈՐԵԱՆ, 40 տարեկան, Նորդուզի կողմերից։ 1896-ի Վանի դէպքերի ժամանակ իր ընկերներով անցնում է Պարսկաստան։ Մասնակցում է 1897-ի Արշաւանքին, որտեղից վերադառնալով, նոյն թւին զինատար խմբի հետ անցնում է երկիր։ Երկրում շրջում է ազատ։ 1899-ի աշնանը, թողնելով ընտանիքը Վանում, գալիս է Պարսկաստան զբաղւելու զէնքերի փոխադրութեան գործով, և այդ գործին էլ տալիս է իր անձը...

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻՈՅ ՇՈՒՐՋԸ

ԹԻՒՐՔԻԱ, ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ԵՒ ԱՄԵՐԻԿԱՀԱՅԵՐԸ.— Հայաստանի ջարդերուն ատեն եւրոպական պետութիւնները, ինչպէս եւ Ամերիկան, իրենց հպատակներուն կրած մնաներուն համար տուգանք կը պահանջէին. բայց այդ պահանջները աւելի լեզւի ծայրով կըլլային. իւրաքանչիւր տէրութիւն կ'ըսէր. „Թիւրքիայէն առնելիքս ըլլայ“։ Գիտէին թէ այդ պահանջը նեղօրին դէմ պիտի գար, Նասրէտտինին / խալիֆին պէս պիտի ծնէր օր մը, կամ պիտի ծագէր։ Եթէ եւրոպական կառավարութիւնները Թիւրքիոյ մասին անտարբեր կամ ժլատուն երեւին, նոյնիսկ իրենց իրաւունքներուն մէջ, ապահովօրէն կրնանք ըսել. „բանին մէջ բան կայ“։

Թիւրքիան կը քամեն անզգալապէս, իսկ Թիւրքիոյ կառավարութիւնը կը կարծէ թէ ժամանակի ծակատագրութիւններէն, հարւածներէն կը խուսափի. թէ ինքը կ'ապրի „հակառակ աստւածներու կամքին“, մինչդեռ կ'ապրի արշուն կեանքը, որ ծիւնին տակ իր ծարպը կ'ուտէ։

Համիդ, մեծ զգայասաքը եւ մեծ ունայնապաշտը, որուն մեծ քաղաքագէտի տիտղոսը կուտան տգկատակները — անբարոյականութեան եւ ոճրագործութեան քաղաքագիտութիւնը — արեւելեան մտքի գերադրական ծուլութիւնով՝ու փինթի պարտադանի մը քաշքշումներով, ծուկը ծառն ելլելուն ձգած է իր պարտքերուն վճարումը։ Պարագայ մը, որ դժար չէր զար եւրոպական այն պետութեանց, որոնք 'օր մը մտադրած են, խաղ մը խաղալու համար, զէնք ընել այդ առնելիքը։

Համիդ իր յաղթանակի դափնիներուն տակ հպարտ կը քնանար:

Միացեալ Նահանգներու նախագահը յանկարծ Փոքր Ասիոյ մէջ Ամերիկայի միսիոնարներու կրած վնասներու փոխարէն 100,000 տօլար պահանջեց (500,000 ֆրանք):

Համիդ, ծովերու ու ցամաքներու սուլթանը, կը յամառի չտալ, առարկելով թէ ինք մատ չունի այդ վնասներուն մէջ, թէ անխուսափելի չարիքներ էին անցան, եւ թէ միւս տէրութեանց ալ զէնք տուած չըլլալու համար սկզբունքով չուզեր վճարել Ամերիկայի ալ: Ծերունի „մարդը“ գիտէ ինք որու հետ գործ ունի, բայց յոյս ունի թէ եւրոպական պետութիւնները չեն թողուր որ իրեն պէս „բարձր“ վեհապետ մը, յանուն „աստուածային իրաւունքի“ սկզբունքին, հանրապետութեան „հասարակ“ նախագահի մը առջեւ խոնարհի, եւ որչա՜փ իրաւունք ունի անիծելու Քոլոմպոսը, որ Ամերիկան գտաւ:

Աստուծոյ շուքը ինքզինք Եւրոպայի „երես առած“ լակոտը կը կարծէ արդէն:

Վաշինկթոնի կառավարութեան խստասրտութիւնը, անողոք վարմունքը կեղծ դրութեան մէջ դրին թիւրք կառավարութիւնը, կամ մանաւանդ սուլթանը: Հիւէի շէքին քերելու համար, սուլթանը հրամայեր է նաւ մը շինել տալ եւ այդ նաւին գնին հետ միածուլել տուգանքը. խնդիրը ցարդ անկախ կը մնայ, միջազգային խառնաշփոթութիւններուն պատճառով գուցէ: Աշխարհ խաղաղի թերեւս, բայց Թիւրքիան բնաւ երբեք. այդ երկիրը միշտ պատրաստ է զբաղեցնել եւրոպական դիւանագիտութիւնը, զի այնքան անսպառ է իր էշութիւններուն, իր բարբարոսութիւններուն աղբիւրը. քանի կը կորես, այնքան աւելի կ'աճի, այնքան աւելի կ'ուռճանայ հոն գազանութեան ծաղիկը: Թիւրքիան ինչո՞վ կրնար իր վրայ խօսել տալ քաղաքակիրթ աշխարհին, եթէ ոչ տմարդութիւններով, գազանութիւններովը. Եթէ այդ հակամարդկային ու ահռելիօրէն բացասական արարքները չըլլային, terra incognita (անծանօթ երկիր) պիտի մնար Թիւրքիա կոչուած երկիրը: Այդ մասին սուլթան Համիտ կրնայ հայրենիքի երախտագիտութեան արժանացած սեպել:

Ամերիկայի պէս հզօր եւ ազատական հանրապետութեան մը Թիւրքիոյ գործերուն միջամտութիւնը մխիթարական երեւոյթ մըն է, ամէն տեսակէտով, եւ բնական ալ է քանի որ այնքան միսիոնարներ կան եւ ունին գրեթէ էն հոյակապ դպրոցները Թիւրքիոյ մէջ: Տառապող ազգերը, օսմանեան իչօղլանի ռէժիմին տակ, սիրով եւ սրտատրոփ պիտի նայէին Նոր աշխարհին ուր Ֆրանքլին „երկինքէն շանթը խլեց ու բռնաւորներէն մականը“:

Ընդհանուր սխալ կարծիք մըն է՝ թէ հայկական յեղափոխութեան բուն հեղինակները ամերիկեան միսիոնարներն են: Անոնք որոնք չեն ճանչնար Հայաստանը կամ Թիւրքիան — Ափրիկէէն աւելի խաւարակուռ — երեւոյթներէն միշտ կը խաբուին: Միսիոնարները, կրնանք ըսել, ոչ միայն այդ տեսակ գաղափար մը չեն ծոցւորած իրենց „հեզ“ ուղեղներուն մէջ, այլեւ նոյնիսկ դէմ եղած են: Իրենց բանը գործը եղած է քարոզել, աղօթել ու կրօնական կրթութիւն մը տալ: Ցանցանքը միսիոնարներուն ճիտը չէ — մրջիւնի վրայ իսկ չէին կոխեր խեղճերը...

Յեղափոխութիւնը ճակատագրօրէն պիտի գար, քանի որ իր արմատները արդէն բաւական ուժեղ էին ազատութեան ծառը վեր բռնելու համար: Կրետէն, Պուլկարիան եւս միսիոնարներ չունէին, բայց եւ այնպէս յեղափոխութիւնը, ապստամբութիւնը պայթեցաւ եւ արիւն քալեցուց:

Սուլթանը միշտ պէտք է յիշէ ժողովրդական սա իմաստութիւնը -- հարէմական իմաստութենէն զատ — թէ քամի ցանողը փոթորիկ կ'որսայ:

Բողոքական միսիոնարները, վկայ հայերու տաժանելի եւ շան կեանքին, մղած քիչ-մըն ալ-քրիստոնէական զգացումէն, շատ շատ, իրենց աղօթքին մէջ մեքենաբար կը կրկնէին սա կտոր խօսքերը. „ո՛վ Տէր, յիշէ հայ ազգը եւս“, սակայն այնքան անմեղ կերպով մը, որ Աստուած իսկ եթէ լսէր, կատակի տեղ կ'առնէր. կամ „ոսկեղէն համարէն“ հատուած մը կը կարդային արեւելեան մէկքերանութիւնով մը եւ յետոյ կ'երգէին „ե՛լ հոգիս, թեւերդ լայն բաց, վերին կոչումդ յիշէ“ կամ „օրհնեալ աշխարհ մը կայ երկրէս հեռուն“:

Անոնց պարագային մէջ այդ „օրհնեալ աշխարհը“ Հայաստանը չէր:

Ինչ ալ ըլլայ, մենք միսիոնարներուն վրայ առանձին մեղք չենք բարդեր. անոնք իրենց „երկնային“ դերին մէջ են. մենք մեր „երկրային“ դերին մէջ. երկուքնուս մէջ, շարժում դէպի անծանօթը եւ շարժում դէպի կեանքը, հակասութեան օրէնքը կը տիրէ: Սուլթանը կրնայ կոնակին վրայ հանգիստ քնանալ այդ մասին:

Մեզի համար, ըսենք, Ամերիկայի ձայնը հաճելի է, որ կրնայ սուլթանը դողերու բերել. զի գազանները միշտ անվախ չեն: Գուցէ հանգամանքները առայժմ չեն նպաստեր մաքրակրօն Ամերիկային ազդեցիկ եւ գործնական դեր մը խաղալու, բայց մենք հայերս անտարբեր նայելու չենք պետութեան մը վրայ որ կը ծաւալի ու իր շահերը ունի Արեւելքի մէջ եւ որուն նախագահը, Սպանիոյ պատերազմին ատեն կ'ըսէր. „Ամերիկեան դրօշակը իր հետ ազատութիւնը եւ արդարութիւնը կը պտտցնէ“:

Ֆրանսայի եռագոյն դրօշակը աշխարհի շրջանը ըրաւ ու յոգնեցաւ. Ամերիկայի աստղազարդ դրօշը դեռ նոր կ'առնէ իր հպարտ ծալքերը ու թռիչը. երանի թէ հին աշխարհի այլասերուած ու քաքեյին մարդկութեան փոխարէն, երիտասարդ Ամերիկան ոչ միայն իր մեքենաները, բամբակեղէնները պարպելու տեղ փնտռէր, այլեւ իր ազատութիւնը որ արեան շատութեան մէջ կը խեղդուի:

Ամերիկահայերը, որոնց ազգային նկարագիրը նոր ահագին ցնցում մը տակ, դեռ չէ կրցած իր հաւասարակշռութիւնը գտնել եւ կարծես, աւելի իրենք իրենց դէմ պայքար մը կը մղեն, քան իրաւունք դէմ — մեթինկներ կազմած են, խնդրելու համար Մաք-Քինլիէն որ coward սուլթանը պատժէ: Հայութեան տարագիր լաճերը պատրաստ էին անշուշտ առաջին բռալէին նետուիլ ամերիկեան զրահաւորներուն մէջ եւ երթալ կռուիլ իրենց հայրենիքի դահիճներուն դէմ: Հակառակ այն անշահ պառակտումներուն, այն պատուելիական իմաստակութիւններուն, մոլի բարակութիւններուն — անծանօթ ամերիկեան հողին — հակառակ նոյնիսկ այն տարածայնուած բոլոր մեղապարտութիւններուն, որոնք „մեղայ ամենասուրբին“ „ներշնչումը եւ հմայքը“ կը կազմեն, եւ որոնք բարոյական սեւ մը նետեցին ամերիկեան հայ գաղթականութեան վրայ, կը հաւատանք թէ՝ Ամերիկայի հայերը կ'անդրադառնան արդէն իրենց վրայ, զիրենք շրջապատող պայմանները լրջօրէն եւ խելացիօրէն կը հեզեն ու կը սերտեն. ոչ միայն „գեղեցիկ ու պերճ խօսելու“ արհեստը կը փնտռեն — մեծագոյն գաղտնիքը ընտրական պայքարներու ատեն — այլեւ անգլօ-սաքսոն ցեղին պինդ ու ուժեղ բարքերէն ծաղկաքաղ ալ կ'ընեն իրենց արեւելեան անզօր, կեդրոնախոյս եւ խոլական բարքերը պատուաստելու համար: Այդ երկրին մէջ հայ գաղթականութիւնը աւելի մեծ կշիռ կրնայ ունենայ ամերիկեան հասարակութեան առաջ, բայց դժբախտաբար, ամերիկացիներուն իսկ վկայութիւնով, հայ ազգին բարեխառնութիւնները Ամերիկայի մէջ չեն երեւար, այլ բուն երկրին մէջ պէտք է որոնել: Պէտք չէ՞ր որ յեղափոխական աստառով, կէսմարդ, կէսծուկ ադամաւուրց պատուելիներ, մինչեւ եղունգնուն ծայրը կծու եւ կանաչ աչքերով ազգասէրներ, հայգաղութին բարոյական դիրքը բարձրացնելու ջանային, եւ փոխանակ Պարսկաստանի սահմաններուն վրայ „դաշնակցական եէնիչէրիներու“ հեռատեսութեան, քիչ մը կարճատես ըլլային եւ ճշմարիտ հայրենասէրի մը պէս, արեւելքի շողերէն ու ցօղերէն, Նոր աշխարհի անծանօթ ափերը նետուած տգէտ եւ մոլար հայ հասարակութեան „լապտերներ“ ըլլային, բայց ոչ... „խուլ լապտերներ“, կամ քաւոր առաջնորդներ:

Հաւանօրէն Ամերիկայի մէջ հայերը մեր կարեւոր գաղթականութիւններէն մէկը կազմեն, եթէ որոշ կազմակերպութիւն մը եւ որոշ ուղղութիւն մը ձեռք ձգեն եւ իւրացնեն ամերիկեան նախաձեռնութեան ոգին՝ միացնելով անոր քաղաքացիական պարզ առաքինութիւն մը... եթէ չեն հասած վաղահաս ծերութեան արեւելեան յախուռն զգայապաշտութեամբ:

Ինչ ալ ըլլայ, ամերիկեան հայ երիտասարդութիւնը հայութեան վառվռուն, լեզւանի — եթէ ոչ շատախօս — տարրը կը կազմեն: Փափաքելի էր որ խստապահանջ եանքիներու երկրին մէջ, իրենց խախտուած համբաւը վերաշինէին եւ թոթուելով հայ ազգին տգեղ ու թառմ կողմերը, հայ ազգին թարմ եւ կենդանանալ քաղաքակրթութեան մը մասն ու բաժինը բերէին: Օրինակ առնելով Ֆ է ն ի ա ն ն ե ր ը, անոնց անվհատ եւ հիանալի գործունէութեան ու հայրենասիրութեան տակտիքը, իրենց աչքերը, արեւապաշտի մը պէս, դարձնէին միշտ դէպի արեւելք՝ արիւնով մկրտուած Հայաստանը, ինչպէս Ֆէնիանը կը յիշէ „կանաչ Էրինը“:

Մեր հայրենակիցները, իրենց հայրենիքի ցաւագին կացութեան դիմաց, չինային իբր „լեղի բաժակի“ մը վրայ եւ երբեք չի խորհին թէ Ատլանտեանի անհուն ալիքներն ու անդունդները կը բաժնեն զիրենք իրենց մայր հայրենիքէն. միշտ յիշեն թէ՝ the blood is thicker than the water *) փոխ առնելով անգլօ-սաքսոն ցեղին պարագայայարմար նշանաբանը:

Իսկ եթէ թրքական բարքերը, արեւելեան կայծկայ եւ սուտ նկարագիրներն են որ պիտի առաջնորդեն ամերիկահայերին, եթէ երկրագնտի միւս երեսին վրայ — բողոքականներու „օրհնեալ աշխարհը“ գուցէ — վտարանդի հայերը Պարթօլտի „աշխարհը լուսաւորող“ ազատութեան արձանին առջեւ չեն ունենար հոգիի հպարտ եւ աղւոր սարսուռը եւ աչքի նախանձոտ թարթումը, եթէ Պրօմէթէոսի քաջութիւնը չպիտի ունենան ազատութեան ճառագայթ մը թռցնելու անկէ, ամէն մարդ իրաւունք ունի ըսելու... doodle հայեր:

*) Արիւնը ջրէն թանձր է:

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

* * *

Autorité յայտնի լրագիրը, որը խմբագրում է Ֆրանսիական Պոլ Դը-Կասանեակը, մայիսի 20-ի իր համարում զետեղել է „Հայաստանի Թալանումը" վերնագրով հետևեալ նկատողութիւնը.

«Հայկական նահանգներում եւ մանաւանդ Վանի շրջանում նկատուող յուզումները՝ արդիւնք են այն հրէշաւոր ձեւերի, որով ժողովուում են տուրքերը։ Փոխանակ այդ գործը յանձնելու քաղաքացիական գործակալներին տալով նրանց ժողովրդի ծանր դրութեանը համապատասխանող պատուէրներ, գիւղերներին են դարձրել հարկահաններ, որպէսզի նրանք այդ ձեւով ըստանան իրենց ամսականները։ Տալիս են այս ինչ գիւղը այն ինչ գիւղերական գնդին ասելով. «Ձեզ այսքա՞ն է պարտ կառավարութիւնը. ստացէք այս մարդկանցից՝ գանձելով նրանց տուրքերը։ Հեշտ է ուրեմն հասկանալ, թէ ինչու են հայերը ապստամբւում, տեսնելով իրենց ամէնանգութ կերպով եւ կատարելապէս թալանած»։

Ներկայ ամսւայ վերջերին հայերի դրութեան վերաբերեալ յօդուածներ լոյս տեսան նաեւ Standart. Berliner Tageblat և բազմաթիւ երկրորդական լրագրերում։

* * *

Եւրոպական լրագրերը հաղորդում են, որ քրիստոնեաների դրութիւնը ուսումնասիրելու (?) և տեղական պահանջները պարզելու (!!) համար՝ Պոլսից ուղարկել են Ալբանիա, Մակեդոնիա և Փոքր-Ասիա գերմանական, աւստրիական և անգլիական դեսպանատների զինուորական կցորդները։ Ալբանիա գնացել է անգլիական ներկայացուցիչը, Մակեդոնիա՝ գերմանականը և Փոքր-Ասիա՝ աւստրիականը։

Արդեօք այս նոր ձեռնածութիւնները, — ինչպէս, Բերլինից դրուած — մի տեսակ պատասխան չեն այն դիրքին, որ բռնել է վերջերս դէպի տաճկական կառավարութիւնը Ռուսաստանը։

* * *

Մեր ընթերցողներին յայտնի է, որ մարտից Ժընեվում սկսեց ֆրանսերէն լեզուով հրատարակուիլ մակեդոնական յեղափոխական Effort լրագիրը։ Իր շնորհաւորութիւն մեր կողմից՝ մենք ուղարկեցինք Effort-ի խմբագրութեան „Դրօշակի" անցեալ տարւայ № 7-ում „Դաշնակցութեան" և „Մակեդոնական Գերագոյն Կոմիտէի" միութեան առիթով հրատարակած „Եղբայր ենք մենք" յօդուածը։ Effort-ի խմբագրութիւնը՝ տպագրելով այդ յօդուածը (№ 5), իր կողմից կցել է նրան մի քանի խորհրդածութիւններ, որոնք վերջանում են հետևեալ խօսքերով.

«Հ. Յ. Դաշնակցութեան» օրգան («Դրօշակի») խմբագրութիւնը, իր ջերմ բարեմաղթութիւններով հանդերձ, ուղարկել է մեզ մի յօդուած՝ նշանաւոր իր գաղափարների վերնութեամբ եւ այն հետանդարձների մասնաւորութեամբ, որոնք բացւում են ազատելիքի ժողովուրդների առաջ։ Մենք նրա թարգմանութիւնը զետեղում ենք մեր լրագրի առաջին երեսում. . . Դրա հետ միասին մենք ուղղում ենք («Դրօշակի») քաջարի դուստրատակին մեր եղբայրական ողջոյնը եւ յուսով ենք, որ ընդհանուր ուժով տարուած կռիւը կը պատճառի կատարեալ եւ նոյնպէս ընդհանուր յաղթութեամբ»։

Նոյն մեր յօդուածը բուլգարական լեզուով տպուած է նաեւ Մակեդոնական Գերագոյն Կոմիտէի օրգան „Ֆրէս Ֆորմի" մէջ (№ 14)։

* * *

Վառնայում նորերս երեւան եկած „Հաւիղ" կիսամսեայ հանդէսը՝ իր Ճ-րդ համարի մէջ՝ հաղորդելով „Արմենիա" լրագրի դադարման լուրը, հետևեալ կերպով է բացատրում այդ երեւոյթը.

«(Արմենիա»), նախ ինքնազանցապէս յեղափոխական թերթի, յետոյ դարձաւ եղաւ հայասիրապատիսական օրգան մը, ինչպէսզի յարձակելով յեղափոխական կազմակերպութիւնների վրայ, ջանալով վարկաբեկ ընել զանոնք ազգին առջեւ, առյաւէտ կորուած ժողովրդականութիւն մը վաստակելու եւ անդարձօրէն քրքրուած դարմանելու ձեռք անցընելու անմիտ ու վնասակար երազանքով։ «Արմենիա») յեղափոխական կազմակերպութիւնները եւ անոնց գործունէութեան եղանակը այդ կերպով հարաւանելով՝ յեղափոխութիւնը հարուածած եղաւ. ժողովուրդը, իր սուրբ համոզման մէջ վիրաւորուած, եւ դարձուց հարուածը ու եկած տեղին հասցուց։

«Արմենիա» ինչպէս, որովհետեւ անգիտակից դանուեցաւ անեղ գործութեանը այն ոգիին որուն ինքն իսկ ստեղծողներին մէջը եղած էր ազգին մէջ եւ որուն հետ չկրցաւ վարուիլ չրջհայեաց ու հոգածու փափկութեամբը»։

Մենք չգիտենք, ուրքան ճիշդ է „Արմենիայի" դադարման լուրը, բայց չենք կարող չհամաձայնել „Հաւիղի" հետ, որ եթէ հայ հասարակութիւնը ինքն իրեն չդաւանանի՝ „Արմենիան" ուրիշ վախճան չէ կարող ունենալ։

ԹԵՐԹՕՆ

ՁԵԿՕՆ

Այս դիշեր պատայ ծովակը յոգնած գեղեցկուհու նման անուշիկ նազանքով ծոլ-ծոլ օրօրւում էր իր ափերի մէջ հեալով մեղմիկ, և կարծես չարաճճի աստղերի հմայաշունչ հայեացքներից իր մերկութիւնը ծածկելու համար, յարտաեւ մշուշից անբաւական՝ վրան ձգել էր նաև գիշերային խաւարի թանձր քօղը և պատրաստւում էր հանգիստ քուն մտնել։ Սակայն ոչ խաւարը և ոչ էլ մշուշը չէին կարողանում աստղերին արգելել իրենց տեսողական խաղերը այնուամենայնիւ անհամար լապտերներով վարել էին կապուտակ երկնքի զանազան ծայրերից դէպի այս ծովակը և նայում էին վերից վար իրենց պլպլան աչքերով։ Երբ գիշերային հովը իր պաղ շնչով լցվում, այլայլում էր ծովակի մանկանալոյթը, այն ժամանակ աստղերը սառը ջրի հպումից սարսռացող մերկ մանուկների պէս դողդողում, թրթռում էին ջրի մէջ արծաթեայ շղթեր արձակելով կամ խառնւում էին ալիքների հետ, որոնք հրում, հրելում էին նրան՝ անհանգստակ դէպի ափերը մղելով, կամ կարծես պնդանում, լռչիչում էին իրար ականջին մանուկ դաւանագիրների պէս և մանկական լրջութեամբ, որ մեռոց ափերի մեռ ընդհանուր արծաթեայնչուն քրքջիչով, միահամուռ չգիտցով արար-աշխարհին յայտնեն մի չնչած գաղանիք։ Եւ ջրոս կողմից ափերի լեռները խորհրդաւոր լռութեամբ իրենց խառուռէն անլոյս աչքերը, որոնք չեն թարթում նոյնիսկ փոքրիկների

առաջ, հուել էին դէպի ծովակը հրեշաւոր զարմանքով և կարծես դիտում էին աստղերի և ալեակների, ծովակի և երկնքի այս հրաշալի խաղը։

Եւ ամէն ինչ ներդաշնակ էր բնութեան մէջ այդ դիշեր. ամէն ինչ վսեմ էր և դիւթիչ։

Ինչո՞ւ, սակայն, բնութեան այս աննման խաղաղութեան, այս աստուածային ներդաշնակութեան մէջ բաժին չ՚ունէր ծովափի Աղ... գիւղը։ Դէպի իրենց գերեզմանները խոյս տուող հալածուած ուրուականների պէս մարդիկ փախչում էին այս ու այն պատի տակից, այս ու այն նեղ փողոցից և կարծես շտապով ծածկւում էին անդունդներում։ Մի տնից միւս տուն, մի կտրից միւս կտուր, թոնրատնից դոմ, դոմից դաշտ, պատերի վրայով, դէզերի տակից, փոսերի միջից, քարերի արանքից, աւերակներից, ուր ստուերն աւելի թանձր էր, ուր խաւարն աւելի օձ։ Մարդիկ մերթ սողում էին ծնկների վրայ, մերթ կանգնում-ձգւում էին ու՝ իրար քաշքշելով, քչփչալով, դողալով, անցնում էին, անյայտանում էին ստուերների պէս և յետոյ կրկին երևում, կրկին ծածկւում էին։ Ամբողջ գիւղը իր խրճիթներով սարսափի ձեռքին կարծես գալարւում, ոլորւում, դողդողում էր։ Շներն էլ էին անհանգիստ. անկարգ ու այլանդակ էին հաչում, կամ կաղկանձում ողբաձայն, կամ ոռնում դունչերը դէպի երկինք ուղղած։ Խրճիթներում ճրագ չկար, լոյս չկար, միայն երբեմն այս ու այն փողոցում, այս ու այն տան առաջ մի խումբ մարդկանց ձեռքին երևւում էին մի քանի կերոններ, որոնք մոլորակների պէս այստեղ ու այնտեղ էին յայտնւում փախչողների յետևից, յետոյ ծածկւում, ապա ամէն բան կրկին խորասուզւում էր նոյն խեղդող խաւարի մէջ, և ստուերները շարունակում էին սողալ, քաշքշել։

Այդ չար ժամին ծովափին շտապ-շտապ մօտեցան երկու մարդկային ստուերներ, ըստ երևոյթին երկու կին, մէկը բարձրահասակ և առնական շարժումներով, միւսը աւելի փոքր և քնքոյշ կանացի մարմնակազմով։ Նրանք մի վայրկեան կանգ առան մի ձկնորսական նաւակի առաջ։

— Ծովից չե՞ս վախենում, հարցրեց բարձրահասակ կինը փսփսուկով։

Երկրորդը պատասխանի փոխարէն գլխով բացասական շարժում արեց, հասկացնելով՝ որ չի վախենում։

— Նաւակ նստել ես։

— Այո՛, պատասխանեց երկրորդը դարձեալ գլխով։

— Թիավարել կարո՞ղ ես։

Պատասխանը բացասական եղաւ։

— Ղեկը կարո՞ղ ես պահել։

Փոքր կինը դրական պատասխան տուեց։

— Դէ՛հ շուտ, նստիր — վրայ բերեց բարձրահասակ կինը, — վերջապէս ինչ էլ որ լինի, լաւն այս է, շարունակեց նա, տեղ բռնելով. մեզ մնացել է կամ նա, կամ սա, և նա ձեռքով երկինքը ապա ջուրը ցոյց տուեց։

Նրանք նստեցին։ Հահիլ կինը ղեկը բռնեց, իսկ միւսը թիակներն առաւ, և նաւակը վայրկենապէս հեռացաւ ափից՝ շտապ-շտապ պատռելով քնած ալիքները։

—

Ո՞վքեր էին այդ երկու խորհրդաւոր կանայք։

Բարձրահասակ կինը Թուխիկենց Հաւսն էր, իսկ միւսը՝ նրա հարսը, սիրուն Հեղինարը։ Աղ... գիւղում ո՞վ չէր ճանաչում Հաւսին, այն բարձրահասակ, առնացի կնոջը, որի չորացած, թուխ դէմքը, մանաւանդ խորը, սև աչքերը չար լինելու չափ լուրջ էին միշտ։ Այդ դէմքին նայելով՝ կարելի էր կարծել, թէ Հաւսն միշտ զայրացած է, միշտ քինոտ, միշտ դժգոհ մի բանից։ Նրա դէմքի արտայայտութիւնը չէր փոփոխւում, բայց փորձած աչքը կարող էր նրա իսկական զայրոյթի և խաղաղութեան նշանները գտնել այդ միապաղաղ դէմքին, որովհետև երբ Հաւսն կատաղած էր, այդ ժամանակ նրա քթի վերևում, թաւ յօնքերի միջավայրում և բերանի երկու անկիւններում մի-մի զոյգ անախորժ, չարագուշակ կնճիռներ էին կազմւում։ Ահա այդ ժամանակ էր սարսափելի Հաւսն և նրան խօսեցնելն անվտանգ չէր։ Նա քայլում էր միշտ գլուխը բարձր, մէջքն ուղիղ, հաստատ, առնացի քայլուածքով և առհասարակ նրա ամբողջ մարմնակազմը, բնաւորութիւնը ինչ-որ առնական բան ունէր, որ այնպէս անախորժ խառնուրդ էր կազմում կանացիութեան հետ։ Այսպէս՝ նա կանացի աշխատանք չգիտէր, ասել ձեռք չէր առնի, բայց մեծ սիրով իր ամուսնու՝ ձկնորս Վրթօյի հետ՝ նաւակը կը նստէր, կը թիավարէր տղամարդից լաւ և առհասարակ երկիւղ առած բանը չգիտէր։ Ամէնքն էին վախենում Հաւսի լեզուից և զայրոյթից, բայց մանաւանդ նա սարսափելի էր իր ամուսնու համար, որ առանց նրա խորհրդի ոչինչ չէր անի։ Գիւղացիք այդ գիտէին, և վաղուց սովորութիւն էր դարձել Վրթօյին անուանել „Հաւսի Վրթօ“։ Եւ ոչ ոք, նոյնիսկ ինքը Վրթօն, այդ կոչումը տարօրինակ, ստորացուցիչ չէր գտնում։

Մի հատիկ զաւակ ունէին նրանք, որ դեռ փոքր հասակից ընկերանում էր ծնողներին ձուկ որսալիս, իսկ երբ հասակ առաւ, ամուսնացաւ, այն ժամանակ Հաւսն իր ամուսնուն տուեց ծովն ու որդին, իսկ ինքը վերցրեց տունն ու հարսը։ Ծովի ճախորդութիւններից, նրա ահաւոր անակնկալներից, յարատև յորձանքների վտանգից որդուն պիտի պաշտպանէր հայրը, իսկ չար աշխարհի գայթակղութիւններից, կեանքի մոլութիւններից, մարդկանց անիրաւութիւններից՝ ինքը Հաւսն պիտի պաշտպանէր իր հարսի և իր օջաղի պատիւը։ Կեանքն էլ մի ծով չէ՞... Իսկ Հաւսն լաւ էր ճանաչում ծովն իր անդունդներում թագցրած կրքերով, կեանքը իր խէր ու շառով։

Էլ այնուհետև Հաւսին ոչ ոք չտեսաւ ծովի վրայ, և հարսին ոչ ոք չտեսաւ փողոցում։ Խստաբարոյ կեսուրը մի րոպէ անգամ Հեղինարին մենակ չէր թողնում։ Նրա չար բախտից հարսն էլ գեղեցիկ էր—այսպէս էին համոզուած ամէնքն առանց տեսնելու։ Հարսը բերուած էր 2-3 ժամուայ ճանապարհ հեռու մի ծովափնեայ գիւղից. այնտեղից էր գալիս նրա գեղեցկութեան լուրը։ Հարևանները կատակների նիւթ էին դարձրել Հաւսի զգուշութիւնը, բայց այդ կատակներից նա նեղացողը չէր։

— Ի՛նչ ուզում էք, ասէք, ես իմ բանը գիտեմ, ասում էր նա հարևանուհիներին։ Մարդուն էլ եմ ճանաչում, կնկան էլ։ Երկուսն էլ իրար արժէն. մարդը խամ միշտ „շուն“ կը լինի, „աչքը շոր“, „հարևանի հարսն էլ միշտ սիրուն է“ և „աչքը դուրս“։

Ահա թէ ինչու համար նա այնքան զգոյշ, այնքան խիստ էր դէպի իր հարսը։

Եւ այսպէս ապրում էին նրանք, լաւ-վատ՝ գլուխէին պահում։

Բայց մի օր սև եկաւ Թուխիկենց տան վրայ. Վրթօն ու որդին ծովը գնացին ու էլ յետ չ՝եկան. երկուսով էլ փոթորկին զոհ գնացին. և մի քանի օր յետոյ նրանց դիակները գտան ծովափում։

Օջաղը փլաւ... Հարսածը զարհուրելի էր... Երկու կանայք սև կապեցին, սգացին. Զաւօն երկար արտասուեց, բայց չկռացաւ. միայն այնուհետև երկու յօնքերի միջի և շրթունքների եզրի կնճիռներն էլ չը ջնջուեցին։ Նա սարսափելի էր։ Կամաց կամաց վրայ հասնող աղքատութիւնն էլ աւելի դաժան, աւելի մարդատեաց դարձրեց նրան. էլ չէր խօսում, չէր վիճում, չէր անիծում։ Ասում էին միայն, որ Հարսի հետ աւելի քաղցր էր վարւում այնուհետև, կարծես նրա մէջ էր փընտռում իր յետին սփոփանքը։ Այս քնքշութիւնը դէպի Հարսը սակայն մազի չափ անգամ չմեղմացրեց նրա հսկողութիւնը։ Ընդհակառակը աչքերը չորս դարձան իր այրի Հարսի, իր օջաղի պատիւը պաշտպանելու համար, մինչև որ „ջահիլը“ կրկին մարդու գնար։ Երկու սգաւոր կանայք սև օրով ապրում էին։ Հարսը, հնազանդ և՛ իր կեսուրին և՛ իր այնքան անսիրտ ճակատագրին, սպասում էր իր երկրորդ բախտին։

—

Էլի հարկ էին հաւաքում Աղ... գիւղում։ քանիներորդ անգամն էր, ո՞վ գիտէր։ Տարել էին ամէն ինչ— անասուններ, կահ ու կարասիք, զարդեր, շորեր,—բայց հարկահանները դարձեալ աւերած էին գործում տներում։ Դեռ, սպանութիւն, առևանգութիւն, պատի անարգանք գիւղը բռնել էր։ Մարդիկ փախչում էին, կանանց, աղջիկներին թագցնում։ Գիւղը կրակի մէջ էր։

Այն օրը Զաւօյի դէմքի կնճիռները շանթալից ամպերի պէս կախուել էին։ Ի՞նչ անէր, ո՞ր ջուրն ընկնէր. երբ զաբթիաները տուն թափուեն՝ ի՞նչ տայ, Հարսին ի՞նչպէս ազատի, ո՞ւր փախցնի։ Նա անհանգստութեամբ դուրս էր գնում, ներս մտնում, ինքն իրեն խօսում, մռմռում, Հարսին նայում, տան չորս կողմում բան փնտռում, որ տանի շուտով յանձնի, գուցէ տուն չգան,— բայց ոչինչ, ոչինչ չկար... Միայն Հարսն էր ու իր պատիւը, որ փրկել էր պէտք։

Մութն իջաւ։ Արդէն գիշեր էր, երբ Հարևան տնից աղմուկ բարձրացաւ։ Զաւօն դուրս թռաւ բակը, կտուրը բարձրացաւ և Հարևանի հերթիկի վրայ կռացաւ։ Տեսարանը սարսափելի էր։ Մի տասնիկ բէյ և տասնի չափ զաբթիաներ լցուել էին տունը։ Երեխաները լալիս էին աղիողորմ, սրտապատառ ճիչերով. կինը կծկուել էր մի պատի տակ, գլուխը քաշ ձգած՝ նոյնպէս արտասուում էր, իսկ՝ տանտիրոջը թակում էին տասնիկները.

— Չկայ, Աստուած է վկայ չկայ — աղերսում էր խեղճ մարդը — տարէք ինչ ուզում էք, ինչո՞ւ էք ըսպանում ինձ. չէ՞ վերևում երկինք կայ...

— Լաւ, որ ոչինչ չկայ — ասաց բէյը խաղաղութեամբ — կինդ տուր, կինդ կը տանենք Հարկիդ տեղ։

Երեխաները մէկէն ճչացին և մօր փէշերից կախուեցին։ Մայրը կծկուեց նրանց վրա հեծկլտալով, զաբթիաներն իրար ընկան, բայց Զաւօն էլ չսպասեց։ Նա շուտով ցած իջաւ, տուն մտաւ, Հարսի ձեռքից բռնեց և նրանք դուրս եկան։ Թէև չորս կողմում պահապաններ կային, բայց բակերով-կտուրներով կարողացան գիւղից դուրս գալ ու ծովին հասնել և այժմ փախչում էին ծովով դէպի Հարսի հէրանց տուն, դէպի միւս ափը։

— Հայ հո՜, հողը Զաւօյի գլխին... Սևն եկաւ տունս բռնեց բաւական չի, հիմայ էլ Հարսիս պատիւը կեղտոտ զաբթիաներին տամ,—մռմռում էր Զաւօն ինքն իրեն, երբ մի փոքր հեռացան ափից.—անիծուիս երկիր, փլես „այամ“, Հարկը գիշերն են հաւաքում։ Վախ, վախ, էն ի՞նչ տեսայ, խե՜ղճ մարդ... Չէ, էս լաւ է, էնպէս չէ՞ Հեղինար. կամ Հօրդ կը տամ, կամ ծովին. այնտեղ՝ բարեկամներ, այստեղ՝ ծովի տակ՝ ամուսիններ։ Եա՛ Աղթամար, քեզ եմ կանչել...

Հեղինարը լուռ էր, նա չխօսկան էր կեսուրի հետ և չէր խօսում նոյնիսկ այս ճգնաժամին։

Եւ թիակները շրփում էին, նաւակը սլանում էր, ջրերն աղմկում էին, աստղերը պլպլում վերևում և վարում, ծովը խաղաղ էր, թեթև հովը բարեյաջող։ Պառաւը նայում էր ջրին և թիավարում լուռ, բայց Հեղինակը հանգիստ նստել չէր կարողանում։ Նա նայում էր թիակներին, ապա հեռու խաւարին, յետ էր նայում դէպի ափերը, դէպի գիւղը, որտեղից հեռացան, և բոլոր նշաններից երևում էր, որ նա սաստիկ վախենում է և՛ ծովից, և՛ խաւարից, և՛ թշնամիներից։

—

Արդէն բաւական հեռացել էին ափից, երբ Հեղինարը մէկ էլ յետ նայեց, ցնցուեց, ապա ծափ տուեց, կեսուրի ուշադրութիւնը հրաւիրեց և ձեռքը մեկնեց հեռու դէպի ափը, ուր ճրագներ էին երևում, լոյսեր էին շարժուում այս ու այն կողմը։ Արդեօք իրենց յետևի՞ցն են գալիս... Զաւօն էլ տեսաւ, բայց ոչինչ չ՝ասաց. միայն նկատելի էր, որ նա ուժ տուեց թիակներին։ Նաւակն այժմ ասես թռչում էր, բայց և այնպէս դեռ որքա՜ն ճանապարհ կար... Երկու կանայք այժմ աւելի յաճախ էին նայում դէպի գիւղը, դէպի ափը. ճրագներն այժմ ասես ջրի վրայ էին և շարժուում, գալիս էին նրանց յետևից արագ-արագ։

— Եա՛ Տիրամա՛ր,— մրմնջում էր պառաւը և թիավարում, բայց նրա ուժը կարծես կամաց-կամաց պակասում էր։ Հեղինարը սարսափով էր նկատում, որ նաւակն աւելի և աւելի դանդաղանում էր։ Իսկ հեռու-հեռու՝ ծովի վրայ պլպլացող երկար երերուն ճրագները հետևում էին նրանց խաւարի միջից, ինչպէս զոհ փընտրող սոված գայլի զոյգ աչքեր։

Ցոգնածութիւնը յաղթում էր Զաւօյին։ Նա մի րոպէ թողեց թիակները, հանգստացաւ և դարձեալ արագ-արագ թիավարել սկսեց։ Իզո՞ւր. նաւակը շատ քիչ էր առաջանում, իսկ ճրագները մօտենում էին հա՛ մօտենում... Էլի մի փոքր, և գուցէ թիակների ձայները լսելի լինէին։

Ի՞նչ պէտք էր անել։ Զաւօն հաստատ համոզուած էր, որ եկողները տասնիկներ են. էլ ո՞վ սիրտ կ՝անէր ճրագով ծով դուրս գալ այս ժամին։ Ուստի նա որոշեց խոյս տալ ծովի խորքերը, ամէն վտանգ յանձն առնելով։ Նա այդ նպատակով թիավարեց դէպի բաց ծովը, բայց այդ էլ անկարելի եղաւ. հակառակ հողմը նրա ջանքերն ապարդիւն դարձրին։ Մի քանի րոպէից յետոյ՝ փախստականները կանգ առան բաց ծովում ուժասպառ՝ և սարսափով նայում էին գայլի աչքերին, որոնք այժմ փայլում էին տասն-քսան քայլի վրայ։

— Ո՞վ էք, — ձայն տուին տասնիկները։

Պատասխան չկար։ Զաւօն էլ չգիտէր, թէ ի՞նչ է կատարուում իր հետ։

Մօտեցան։ Ընդհանուր ուռնոց բարձրացաւ զաղանների նաւակում։

— Փախած թռչունն է — ձայն տուեց մէկը. — չ'ասացի՞, որ նրանք ծովը դուրս եկան. տեսայ, Հասան, Մարգարէն վկայ՝ տեսայ, որ փախչում էին, բայց գլխի չ'ընկայ, սատանան կապեց ինձ։

— Հին ազատին ծովը ձգենք, իսկ բռնած լորը տանենք, ասաց մի զափթիա։

— Մեր ի՞նչ բանն է այդ. բէյն ասաց երկսին էլ բերէք, կը տանենք։

— Կ'ասեմ չի կարելի բէյին ասել, թէ ինքն իրեն ձգեց ծովը քո երկիւղից։

— Թամաշի բան կը լինի, որ տեսնենք, թէ պառաւն ինչպէս կը խռխռայ։

Ջաւօն, հանդարտ նստած իր տեղում, նայում էր և լսում։ Հեղինարը երեսի վրայ ընկած էր նաւակի մէջ, հեծկլտում էր և դողդողում...

Քիչ յետոյ երկու կանայք յետ էին տարւում դէպի գիւղ։ Ջաւօն նստած էր նաւակի յետևում մենակ, իսկ Հեղինարին զափթիաները նստացրին իրենց մօտ և թիավարում էին, միևնոյն ժամանակ լկտի կատակներ անում նրա հետ։

— Տեսնո՞ւմ ես, էս ջաղուն ինչպէս է սիրտ արել գիշերով մենակ ծովը դուրս եկել։ Հաւատա՛, որ բէյի վախը չլինէր՝ սպանէին, ես էս չար սհաթին ծովը չէի դուրս գայ։

— Էսպէս են էս անօրէնները. լաւ բանը ծովը կը ձգեն, շներէ, գէլերի բաժին կ'անեն, միայն թէ չտան թուրքերին։

— Ղա՛տ սիրուն է։

— Բէյին ասել են, թէ չէ՝ նա էնպէս ձեռք ու ոտք չէր ընկնի ու մեզ ջրի երեսը գցի։ Առաւօտից էր որոշել, որ գիշերը էս անիծած պառաւի տանը քնի։

— Տեսնես ո՞ւր էր տանում հարսին էդ „եաման“ պառաւը։ Է՜յ ջաղու — դարձաւ Հասանը դէպի Ջաւօն — ո՞ւր էիր տանում հարսիդ։

Ջաւօն դարձեալ պատասխան չտուեց։ Նա կարծես ոչինչ չէր լսում, այլ մտածում էր, մտածում... Կամաց-կամաց նրան խպառ մոռացան։ Ջաւօն տեսաւ՝ թէ ինչպէս ափի ճրագները մօտենում են աւելի և աւելի. երեւի այնտեղ սպասում են... „Սպասեցէ՜ք“, մռմռաց նա ցած ձայնով, ապա նա տեսաւ, թէ ինչպէս մի զափթիա ձեռքը ձգեց հարսի վիզը և գլուխը դէպի իրեն քաշեց, տեսաւ թէ ինչպէս մի ուրիշը աշխատում էր նրա երեսը բանալ, Ջաւօյի հարսի երեսը... Էլ բան չտեսաւ Ջաւօն. Նա մէկէն վեր ցատկեց տեղից, արագութեամբ կռացաւ նաւակի եզրին, երկու ձեռքով բռնեց և վայրկենապէս ձգւեց ջրի մէջ՝ իր բոլոր թափով հետը քաշելով նաւակը ու ճչալով՝

— Ծո՛վ, ծո՛վ, մեզ էլ ծածկիր...

Նաւակը շուռ եկաւ հէնց նրա գլխի վրայ և իսկոյն խորասուզւեց։ Ալիքները մի փոքր աղմկեցին, մի քանի շաչիւն, մի քանի հռնդիւն լսւեց մթութեան մէջ, օգնութիւն կանչող մի քանի ճիչեր խեղդւող կոկորդներից — և ամէն ինչ լռեց... Զոհերն ու դահիճները միևնոյն սառն ալիքների տակ թաղւեցին, և ջրի մակերևոյթը կրկին խաղաղւեց...

Դարձեալ աստղերը շարունակում էին պլպլալ ծովի մէջ, դարձեալ լեռները շարունակում էին իրենց խոռոչէ-կոյր աչքերով դիտել ծովի և երկնքի խաղը, շարունակում էին դիտել բնութեան ներդաշնակութիւնը։ Մարդն էր միայն մի յանցաւոր շփոթ առաջ բերում այդ բոլորի մէջ. նա էր իր ոճիրով պղծում երկրի երեսը։

Եւ երկիրը կ'ամաչէր երկնքից, եթէ խաւարը չծածկէր նրա դէմքը։

ՂԱՐԻԲ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ներկայիս կը հրաւիրենք Պալքանեան շրջանի մէջ գտնւող բոլոր այն անձերը, որոնք ուղղակի խմբագրութենէն „Դրօշակ“ թերթը կ'ստանան, որ փութան շուտով պատասխանել Հ. Յ. Դաշնակցութեան Պալքանեան շրջանի առժամեայ Կեդր. Կօմիտէի կողմէ ցրւած շրջաբերականին։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՍ ստացած է՝

Պ. Աւշար Լուսինեանէն 8 Փրանք, „Ժեռենց“ խմբէն 10 Փր. Տուլբիչէն՝ Ա. Առ-էն 10 Փր., Գրաուբինդէնէն՝ Ա. Մարզպետունիէն 2 Փր., Ոմն 20 Փր.։ Գումար 50 Փրանք։

ՆԱԽԱՅԱՆԳԱՅԻ Կօմիտէն՝

ՄԻՇԸՂԸԻ գիւղից՝ Գաբր. Սպիտանեան 25 ռուբլի, ԶՐԱՇԷՆԻ „Գոգուռ“ խմբից 10։ Գումար 35 ռուբլի։

ԱՄԵՐԻԿԱՅԻ Կեդր. Կօմիտէն՝

ԼԻՆՆ կօմիտէի 1899 տարեշրջանի մուտքը՝ Արամ 10 դոլար, Հրաչեայ 10, Փառնակ 16. 25, Ներսէս 16. 25, Ատոմ 18, Զարեհ 27. 75, Ժիրայր 2. 75, Զարմայր 1, Հայկակ 8. 75, Թաթուլ 1. 50, Արշամ 1. 50, Շաւարշ 2. 60, Մուշեղ 1. 50, Արայ 2. 50, Շիրակ 2. 50, Վարազդատ 1. 50. Պարոյր 1. 50, Ոմն 2, Գեղամ 3, Ռուբէն 1. 75, Վահագն 13. 41, Վահէ 3. 64 դոլար Գումար 149 դոլար 65 սէնթ։

ՎԸՍԹ ՀՕԲՕՔԸՆԻ կօմիտէին 1899 տարեշրջանի մուտքը 74 դոլար 36 սէնթ։

ՓԱԹԸՐՍԸՆԻՆ Հայկ Գնունի-ի հաշիւ 1899-ի շրջանի 5 դոլար։

ՎԱՐՆԱՅԻ Կեդր. Կօմիտէն՝

ՎՐԸԺԻ կեդր. կօմիտէի ցանկութեամբ տպագրւում է նրա դրամական մուտքը 1898—1899 թւականների ընթացքում.

Մ. քաղաքից (անդորրագրեր №№ 1, 4, 10, 13, 22) 1615 ռուբլի։ — ՈՍԿԱՆԱՊԱՏԻՑ 200 ռ. — ՄՐԳԱՍՏԱՆԻՑ (№№ 3, 8, 9, 12, 16, 17, 18, 23) 1468 ռ. — ԴՈՒՄԱՆԻՑ 75 ռ. — ՌԱԾ-ից (№ 7) 500 ղուռն։ — ՂԱԶ-ից (№ 15) 500 ղռ. — ԹՈՒՐԱՆԻՑ (№ 11) 1000 ղռ. — ԱՐՏԱԲ-ից օր. Եղ-ից (№ 19) 152 ղռ. — ՄԻՆԱՐԷԹԻ „Ճառագայթ“ գիւղի երիտասարդներից 178 ղռ. — ՄԻՆԱՐԷԹԻ „Մահ“ գիւղից 600 ղռ. — ՄԻՆԱՐԷԹԻ „Սառ“ գիւղից 100 ղռ. — Հանգանակութիւնից 400 ղռ. — Օր. Մարօ-ի կարի մեքենայից 200 ղռ. — Բէգեր 52 ղռ. — Տ. Ձ-ից 20 ղռ. — Ս. Ժամ-ից (№ 20) 16 ղռ. — Բժ. X-ի միջոցով (№ 21) 50 ղռ. — Երիտասարդների թատրոնից 135 ղռ. — Մի ներկայացումից 1216 ղռուշ։ Ընդամէնը 3358 ռուբլի եւ 5119 ղռուշ։

Խմբագրութեան դիմել հետևեալ հասցէով՝
Rédaction du **Droschak**, Genève (Suisse)